2011, ՀՈԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 20 (352)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*19 հոկտեմբերի*

### Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ռեկտորին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի ռեկտոր, Մոսկվայի թեմի առաջնորդական փոխանորդ Վերեյսկի արք. Եվգենիին:

Նորին Սրբությունը, իր բարեմաղթանքներն ու օրհնությունը բերելով սրբազանին, ընդգծեց, որ քույր Եկեղեցիների ներկայացուցիչների նման այցելությունները հարմար առիթ են ավելի մոտիկից ծանոթանալու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն եւ մեր հավատավոր ժողովրդին, դարերի ընթացքում նրա կերտած ազգային-հոգեւոր արժեքներին:

Զրույցի ընթացքում կարեւորվեցին երկու Եկեղեցիների միջեւ առկա ջերմ ու եղբայրական հարաբերությունները, մասնավորապես՝ հոգեւոր-կրթական հաստատությունների միջեւ ձեւավորված համագործակցությունը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Սանկտ Պետերբուրգի հոգեւոր ակադեմիայի միջեւ ստորագրված համագործակցության հուշագրին: Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Հայոց Եկեղեցու առաջնահերթ խնդիրներից մեկին՝ հոգեւորականների պատրաստությանը: Տեղեկացնելով, որ թեպետ իր գահակալության տարիներին շուրջ երեք հարյուր եկեղեցականներ են ձեռնադրվել եւ ծառայության կոչվել Հայ Եկեղեցու անդաստանում, սակայն դեռ բազում անելիքներ կան այդ ոլորտում՝ հույս հայտնելով, որ Հայաստանում գործող երեք կրթական հաստատությունները՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանը, Սեւանի Վազգենյան դպրանոցը եւ Հառիճավանքի ընծայարանը, ինչպես նաեւ բարձրագույն կրթությամբ երիտասարդների համար բացված քահանայից լսարանները, պիտի լրացնեն եկեղեցականների պակասը:

Իսկ արքեպիսկոպոս Վերեյսկին հայտնեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հետ համագործակցելու իրենց մտադրության մասին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Տ. Հովակիմ եպս Մանուկյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ վրդ. Սարոյանը եւ Մոսկվայի հոգեւոր ակադեմիայի շրջանավարտ, Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Տ. Մուշեղ վրդ. Բաբայանը:



*20 հոկտեմբերի*

### Եվրոպացի մի խումբ գրողների

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Գրական տապան 2011» ծրագրի շրջանակներում եվրոպական տարբեր երկրներից Հայաստան ժամանած մի խումբ գրողների՝ ՀՀ մշակույթի փոխնախարար Արեւիկ Սամուելյանի ուղեկցությամբ:

Խմբի անունից շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար՝ տիկ. Սամուելյանը ներկայացրեց միջմշակութային շփումների զարգացմանն ուղղված հայ եւ օտար գրողների համատեղ ջանքերով կազմակերպվող գրական եւ մշակութային ծրագրերն ու միջոցառումները:

Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց՝ եվրոպացի գրողների ու հայ գրական աշխարհի ներկայացուցիչների համագործակցության կապակցությամբ: Նորին Սրբությունն իր խոսքում մասնավորապես նշեց. *«Գիրն ու գրականությունը հասարակության հոգեւոր-բարոյական նկարագրի ամենաանաչառ ցուցիչն են: Աստվածաշնչում ասվում է, որ «սրտի լիությունից է խոսում բերանը», այսինքն՝ մարդ խոսում, գրում եւ արտահայտում է այն, ինչ որ իր հոգում կրում է: Այս առումով, անշուշտ, յուրաքանչյուր ժամանակ իր ուրույն մտածողությունն ունի, սակայն մենք կարծում ենք, որ քրիստոնեական արժեքներ կրող ազգերի գրականությունը, սնվելով քրիստոնեական հարուստ մշակութային ժառանգությունից, պետք է ուղղված լինի մարդու ներքին հոգեւոր շինվածքի կերտմանը, զորացմանը, ամրացմանն ու հարստացմանը»:*

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը գրողներին մաղթեց նորանոր ներշնչանքներ, որպեսզի նրանց հայաստանյան տպավորությունները նոր աղբյուր դառնան հետագա ստեղծագործական կյանքում:

*21 հոկտեմբերի*

### ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստան ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Բեռնար Ֆասիեին, Ռոբերտ Բրադկեին, Իգոր Պոպովին եւ ԵԱՀԿ գործող քարտուղարի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկին:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին՝ իրենց ներդրած ջանքերի համար՝ ի խնդիր Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման եւ տարածաշրջանում խաղաղության հաստատման: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը ներկայացրեց տարածաշրջանում խաղաղության եւ համերաշխության մթնոլորտի ձեւավորման գործընթացում Հայոց Եկեղեցու ներգրավվածությունը եւ ներդրումը, տեղեկացրեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարքի միջնորդությամբ պարբերաբար տեղի ունեցող՝ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ եւ քառակողմ հանդիպումների մասին, որոնց արդյունքում Ռուս Եկեղեցու պատրիարքը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Վրաց Եկեղեցու հովվապետը եւ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդը խաղաղության եւ համերաշխության համատեղ կոչեր են հղում տարածաշրջանի ժողովուրդներին: Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայտնեց նաեւ, որ նոյեմբերի վերջին Հայաստանում կայանալիք՝ ԱՊՀ երկրների միջկրոնական խորհրդի նախագահության ժողովի առիթով եւս տեղի կունենա նման հանդիպում:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ հյուրերը մտքեր փոխանակեցին Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացի շուրջ:



# «Հոգեւոր սպասավորների պատրաստության հայրապետական հիմնադրամի» ստեղծումը

Հոկտեմբերի 15-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ավարտելով հայրապետական այցը ԱՄՆ-ի հայոց Արեւելյան թեմ, վերադարձավ Մայր Աթոռ Սբ Էջմիածին:

Նորին Սրբության այցի ընթացքում, նախաձեռնությամբ Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին՝ Նազար եւ Արտեմիս Նազարյանների, հոկտեմբերի 12-ին Նյու Յորքում, ի պատիվ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նրա ծննդյան 60-ամյակի առիթով կազմակերպվել էր ճաշկերույթ, որին իրենց մասնակցությունը բերեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ եւ բարեկամներ: Երեկոն հանդիսավարեց ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը. նա ողջունեց Մայր Աթոռի բարերարների ներկայությունը ճաշկերույթին եւ ի դեմս ամենքի՝ շնորհավորեց Նորին Սրբությանը՝ ծննդյան տարեդարձի առիթով:

Ճաշկերույթի ժամանակ ԱՄՆ-ի հայոց արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանն անդրադարձ կատարեց ժամանակներին համահունչ հոգեւորականների պատրաստության կարեւոր խնդրին եւ այդ առաքելության իրագործմանն ուղղված՝ Վեհափառ Հայրապետի ջանքերին: Այս առիթով սրբազանը հյուրերին տեղեկացրեց Գերագույն հոգեւոր խորհրդի՝ 2011 թ. մարտի 17-19-ի ժողովում «Հոգեւոր սպասավորների պատրաստության հայրապետական հիմնադրամ» ստեղծելու որոշման մասին, որի նախագահն է տիար Պերճ Սեդրակյանը:

Ի նպաստ հոգեւորականաց պատրաստության հիմնադրամի, որի ընդհանուր համակարգողն է տիկ. Լոռա Գոնոնյանը, նվիրատվությունները շարունակվում են:

Մայր Աթոռ վերադարձի ճանապարհին՝ Փարիզում, հոկտեմբերի 14-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ շվեյցարահայ համայնքի ներկայացուցիչների հետ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդունեց հաղորդումն այն մասին, որ Շվեյցարիայի Հայ Առաքելական Եկեղեցու



Իր խոսքում ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակյանը, անդրադարձ կատարելով Հայկական բարեգործական ընդհանուր միության մշտական զորակցությանը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությանը, տեղեկացրեց, որ ՀԲԸՄ-ն որոշել է իր կրթաթոշակային ծրագրից այս նպատակին հատկացնել մեկ մլն ԱՄՆ դոլար: Այս առիթով տեր եւ տիկին՝ Նազար եւ Արտեմիս Նազարյանները, որոնց ազնիվ հոգածությամբ կազմակերպվել էր ճաշկերույթը, հիմնադրամին նվիրաբերեցին մեկ մլն ԱՄՆ դոլար: Մեկ մլն ԱՄՆ դոլարի նվիրատվություններ կատարեցին նաեւ Մայր Աթոռի բարերարներ տեր եւ տիկին՝ Սարգիս եւ Հռութ Բեդեւյանները, տեր եւ տիկին՝ Հրաչ եւ Սյուզան Թուֆայանները: Տեր եւ տիկին՝ Պերճ եւ Վերա Սեդրակյանները հիմնադրամին նվիրաբերեցին 250 հազար ԱՄՆ դոլար, հարյուր հազարական ԱՄՆ դոլար ընծայաբերեցին տեր եւ տիկին՝ Երվանդ եւ Մելիսա Դեմիրճյանները, տեր եւ տիկին՝ Հայկ եւ Էլզա Դիդիզյանները, տեր եւ տիկին՝ Նշան եւ Մարգարետ Աթինիզյանները: Տեր եւ տիկին՝ Հարրի եւ Էդնա Քելեշյանները, Օսկար Թաթոսյանը եւ Ջերրի Դեմիրճյանը այս նպատակին հատկացրին՝ յուրաքանչյուրը հիսուն հազար ԱՄՆ դոլար: Տեր եւ տիկին՝ Ջորջ եւ Ալիս Գեւորգյանները, տեր եւ տիկին՝ Զավեն եւ Առլին Դադեկյանները, տեր եւ տիկին՝ Բաբկեն եւ Անահիտ Մկրյանները, Հարություն եւ Շաքե Մեխճյանները հիմնադրամին նվիրաբերեցին քսանհինգ հազարական ԱՄՆ դոլար:

Հիմնադրամի նախագահը հայտնեց նաեւ, որ ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի տեղեկացմամբ՝ նույն նպատակի համար թեմի հայորդյաց կողմից արդեն հավաքվել է մեկ մլն ԱՄՆ դոլար:

Ճաշկերույթի ավարտին ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալություն հայտնելով բարերար հայորդիներին՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ցուցաբերվող մշտական զորակցության եւ եկեղեցականաց նոր սերնդի պատրաստության կարեւոր գործին ազնիվ ընծայաբերումներով սատարելու համար:

խորհուրդը լուծարվել է՝ հոկտեմբերի 2-ին կայացած ընդհանուր անդամական ժողովի որոշմամբ: Խորհրդակցությունից հետո որոշվեց հանձնարարել Ժնեւի եւ Լեման շրջանի նորակազմ ծխի ատենապետ Արդեն Շելլեֆյանին եւ արդեն լուծարված՝ Շվեյցարիայի Հայ Առաքելական Եկեղեցու խորհրդի ատենապետ՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ հիմնադրամի անդամ Դանիել Փափազյանին, Շվեյցարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյանի հետ, որպես Սբ Հակոբ եկեղեցու ընթացիկ հարցերի կառավարման կոմիտե, ձեռնամուխ լինել Ժնեւի Ս. Հակոբ եկեղեցում Պատարագների վերսկսմանը եւ Ժնեւի ու Լեմանի շրջանի ընդհանուր անդամական ժողովի հրավիրմանը:

Նորին Սրբությունը, իր օրհնությունը բերելով շվեյցարահայ համայնքի ներկայացուցիչներին, հաջողություն մաղթեց նրանց աշխատանքներին, որով Ժնեւի հայ համայնքը կվերագտնի իր ներքին խաղաղ կյանքը ու համախորհուրդ համայնքային մնացյալ կառույցների հետ ձեռնամուխ կլինի թեմական կառույցների ձեւավորմանը եւ Շվեյցարիայի ազգային-հոգեւոր կյանքի արդյունավետ կազմակերպմանը:

# Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառույցներում եւ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու թեմերում կատարվել են նոր նշանակումներ:

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Զավեն աբղ. Յազիչյանն ազատվել է իր պարտականություններից եւ ծառայության նշանակվել Մայր Աթոռ Սբ Էջմիածնում:

Տ. Մակար վրդ. Հակոբյանը, ազատվելով Ս. Գայանե վանքի վանահոր պարտականություններից, ծառայության է կոչվել Սյունյաց թեմում՝ որպես առաջնորդական տեղապահ:

Մայր Աթոռի միաբան Տ. Հարություն աբղ. Կիրակոսյանը նշանակվել է Հառիճավանքի ընծայարանի տեսուչ:

Տ. Կորյուն աբղ. Առաքելյանը, ազատվելով Շիրակի թեմում ստանձնած պարտականություններից, հոգեւոր իր ծառայությունը կշարունակի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

# Ռումին քաղաքապետների պատվիրակության այցը Մայր Աթոռ Սբ Էջմիածին



Հոկտեմբերի 25-ին Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան եպս Հովհաննիսյանն ընդունեց Ռումինիայի քաղաքապետների պատվիրակությանը: Պատվիրակության կազմում էին Պիտեշտի քաղաքապետ Թուդոր Պենդիուկին, Ֆոկշանի քաղաքապետ Բոգդան Մատիշանին, Ռոմանի քաղաքապետ Լաուրենցիու Լեոբյանուին, Գեռլայի քաղաքապետ Օվիդյու Դրագանին, Դումբրավենի քաղաքապետ Ջորջետա Իրիմիեյին եւ Ֆրումոասայի քաղաքապետ Տիբոր Ֆերենցին:

Սրբազան հայրը, ողջունելով քաղաքապետների այցը Մայր Աթոռ Սբ Էջմիածին, ներկաներին փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեմաղթանքներն ու օրհնությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց հայ եւ ռումին ժողովուրդների բարեկամական ու եղբայրական հարաբերություններին: Սրբազանն իր խոսքում ընդգծեց, որ նման ջերմ հարաբերությունների վկայությունն ու երաշխիքն է այն իրողությունը, որ Հայ Եկեղեցին ու հայ համայնքը Ռումինիայում ունեն երկար եւ ուրույն պատմություն, եւ հայ ժողովրդի դարավոր այս ներկայությունը կերտել է հարուստ մշակութային ժառանգություն: Այս առիթով սրբազան հայրն իր գնահատանքը բերեց ներկաներին եւ Ռումինիայի իշխանություններին՝ հայ ժողովրդի զավակների հանդեպ մշտապես դրսեւորած եղբայրական վերաբերմունքի համար: Կարեւորելով նման փոխադարձ այցելությունների անհրաժեշտությունը, որպես երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների պահպանման երաշխիք, Նաթան սրբազանը նշեց, որ հաջորդ տարի Նորին Սրբության նախագահությամբ կտոնախմբվի Սուչավայի հայոց վանքի 500-ամյակը՝ վստահություն հայտնելով, որ այն իրապես պետք է լինի ոչ միայն հայ, այլեւ ռումին հավատացյալ ժողովրդինը:

Քաղաքապետներն իրենց հերթին շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության համար՝ մեծ օրհնություն նկատելով հայոց հոգեւոր կենտրոնում գտնվելը:

# Մրգաշատի Սբ Աստվածածին եկեղեցու վերաօծումը



Հոկտեմբերի 15-ին Արմավիրի թեմի առաջնորդ Տեր Սիոն եպս Ադամյանի ձեռամբ եւ թեմի հոգեւորականների մասնակցությամբ վերօծվեց Արմավիրի թեմի Մրգաշատ համայնքի Սբ Աստվածածին եկեղեցին: Ներկա էին Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը, ԱԺ պատգամավոր Ն. Գեւորգյանը, Արմավիրի քաղաքապետ Ռ. Խլղաթյանը, հարեւան համայնքի բնակիչներ, շատ ու շատ հյուրեր, որոնց թվում՝ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Ալբերտ Մկրտչյանը:

Տերունական աղոթքից հետո, ըստ ծիսակարգի, սրբազան հայրը ծնկաչոք «Բա՛ց մեզ, Տե՛ր» շարականի երգեցողության ներքո երեք անգամ թակեց եկեղեցու դուռը՝ երկնային Տիրոջը խնդրելով բացել ողորմածության դուռը, որից հետո նախ հոգեւոր դասը, հետո ներկա հավատացյալները ոտք դրեցին Աստծո տուն, ուր տեղի ունեցավ եկեղեցու սբ Սեղանի, 16 սյուների եւ մկրտության ավազանի օծման արարողակարգը:

Մրգաշատ գյուղի Սբ Աստվածածին եկեղեցին կառուցվել է մատուռի վրա, որի շինարարությունն սկսվել էր 1865 թ., իսկ առաջին օծումը կատարվել էր 1903 թ.: Եկեղեցու երկարությունը 33 մ է, լայնությունը՝ 17 մ: 1937 թ. մինչեւ 1980 թ. շենքը ծառայել էր որպես ցորենի պահեստ: Գյուղի ժողովուրդն այդ ընթացքում հավատով սպասել եւ եկեղեցու արեւելյան կողմում գտնվող խաչի մոտ աղոթել է, որ մի գեղեցիկ օր կվերաբացվի իրենց սիրելի եկեղեցին:

2007 թ. մեծ ուրախություն ապրեց գյուղը, երբ Հյուսիսային Ամերիկայի արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի միջնորդությամբ, տեր եւ տիկին Մազմանյանների աջակցությամբ սկսվեց եկեղեցու վերանորոգումը: Այնուհետեւ եկեղեցու վերանորոգման աշխատանքներին աջակցեցին Խլղաթյան եղբայրները, ԱԺ պատգամավոր Նահապետ Գեւորգյանը, Կարեն Մրկրչյանը: Տասնյակ մտահոգ հավատացյալներ եւս իրենց փոքրիկ ներդրումներն են ունեցել: Մեծ էր նպաստը համայնքապետ Գեւորգ Դանիելյանի. նրա ազնիվ աջակցությամբ եւ գործնական քայլերի արդյունքում վերաբացվեց Աստվածածին եկեղեցին:

Մինչ եկեղեցու վերաբացվելը՝ այցելու հոգեւորականի կողմից խարխլված եկեղեցում մատուցվել է Պատարագ, կազմակերպվել ուխտագնացություններ: 2011 թ. հունվարից Տ. Մարկոս քհն. Մանգասարյանն է իր ծառայությունը բերում այս համայնքին:



Սրբազան հայրը վերաօծման արարողակարգից հետո իր օրհնության եւ գոհունակության խոսքն ասաց բոլոր բարերարներին եւ հավատավոր ժողովրդին մաղթեց, որ երկնային Տիրոջը եւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն հավատարիմ մնան ու շարունակեն աղոթել՝ այսուհետ ոչ թե եկեղեցու պատերից դուրս, այլ եկեղեցու կամարների ներքո, քանի որ օրվա խորհուրդն է վկան, որ երբեք զուր չեն մարդկային անկեղծ աղոթքներն առ Աստված:

Եկեղեցու վերաօծումից հետո սրբազան հայրը մոտեցավ՝ գյուղի կենտրոնում գյուղացիների կողմից պատրաստված բերքառատ սեղաններն օրհնելու եւ շնորհավորեց նաեւ Մրգաշատ համայնքի բնակիչներին՝ բերքի տոնի առիթով, որը մրգաշատցիներն անվանում են Մաճառի տոն եւ 2002-ից ամեն տարի մեծ շուքով տոնում, բոլորին հյուրասիրում հարիսա եւ մաճառով լի բաժակներով բարին մաղթում:

*Առաջնորդարան Արմավիրի թեմի*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵՂԵՍԱՑԻ (1691-1705)

*Սկիզբը՝ թիվ 14-19*

Ավետիք պատրիարքը 1702-ին՝ Կ. Պոլիս գալուց մի քանի ամիս անց, վերադարձավ Ադրիանուպոլիս, ուր եկել էին նաեւ վերը հիշյալ երեք քահանաները: Նրանց թույլատրված էր ազատորեն քահանայագործելու: Դժվար է ասել, թե ինչ կատարվեց, սակայն երեք քահանաները կրկին արժանացան Ավետիքի զայրույթին՝ թերեւս նրանց անխոհեմության կամ այլոց քսության հետեւանքով: Նրանց բանտարկեցին առաջնորդարանում, որ մեծ վեզիրի հրամանով պատժեն: Միջնորդությունն օգուտ չտվեց, ուստի ինչ-ինչ մարդիկ հարձակվեցին առաջնորդարանի վրա եւ նրանց ազատեցին: Ավելին. նրանք ծանակոծեցին պատրիարքին եւ նրա մարդկանց: Ավետիքը բողոքեց մեծ վեզիրին, սակայն Տալտապան Մուսթաֆա փաշան զայրացավ հենց իր՝ պատրիարքի վրա, թե ո՞վ է նրան որեւէ մեկին բանտ նետելու եւ շղթայելու իրավունք տվել, եւ Ավետիքին բանտարկեց: Նա բանտում մնաց 27 օր, մինչեւ Ֆեյզուլլահը նրան ազատեց եւ նրա հակառակորդներից հինգ հոգու Կ. Պոլսի թիարանն ուղարկեց:

Վիճակն ավելի լավ չէր Կ.Պոլսում, որտեղ փոխանորդ նշանակված Հովհաննես Զմյուռնիացին համարձակ դիմում էր գրպարտությունների եւ բռնությունների՝ մեծ տուգանքներ գանձելու նպատակով: Գանգատները հասան մինչեւ Ադրիանուպոլիս, եւ մեծ վեզիրի հրամանով Ավետիքը եկավ Կ. Պոլիս՝ ժողովրդին հանդարտեցնելու: Բայց արդյունքը բոլորովին այլ եղավ. այժմ մեծ վեզիրին ամբաստանություններ գրվեցին Ավետիքի դեմ, եւ Ավետիքը ետ կանչվեց՝ քննության համար: Ավետիքը մեղադրվում էր ֆրանկացյալներին օգնելու մեջ: Ավետիքը Հիսնակաց բարեկանդանին՝ նոյեմբերի 15-ին, մայր եկեղեցու բեմից ժողովրդին կոչեց իր համար վկայություն տալու: Ամբոխը գնաց մեծ վազիրի տեղակալի ատյանը, որ Ավետիքի դեմ ամբաստանությունները վերացնի: Ամբոխից 30 հոգի ձերբակալվեց՝ ֆալախայի ծանակոծության ենթարկվելու սպառնալիքով, ինչը կախաղան է թարգմանվում: 30-ի մեջ էր Մատթեոս Սարի կաթողիկոսը: Հետո տուգանք մուծելով՝ նրանք ազատ արձակվեցին: Սակայն Ավետիքի նպատակը չիրականացավ, եւ նա, առանց վկայագրի, դեկտեմբերի 3-ին մեկնեց Ադրիանուպոլիս: Ֆեյզուլլահը կրկին նրան օգնեց, Տալտապանին իր կողմը գրավեց եւ Ավետիքի հակառակորդներին բանտարկեց, ինչը դարձյալ Ավետիքին ուժեղացրեց:

Մինչ Ավետիքն Ադրիանուպոլսում էր, Հովհաննես Զմյուռնիացին շարունակում էր իր շահադիտությունները՝ պատճառ բերելով լատինականության ծգտումները եւ կաթոլիկական զեղծումները: Այրել էր տալիս լատիներենից թարգմանված հայերեն գրքերը: Լատինների մոտ ուսած եւ նրանց կողմն անցած եկեղեցականներին արգելում էր խորհրդակատարություններ կատարել: Կնունքի եւ թաղման համար պահանջում էր արտոնություն ստանալ պատրիարքարանից, որի նպատակը տուրք գանձելն էր: Իրականում դա փող աշխատելու եղանակ էր եւ ոչ թե հռոմեադավանության հալածանք: Համենայն դեպս, դեսպան Ֆերիոլն արձանագրում է, որ կրոնական խնդիրներում անդորր էր տիրում: Գործն այնտեղ հասավ, որ Հովհաննես Զմյուռնիացին փախավ Պարսկաստան:

Ֆեյզուլլահին հաջողվել էր մեծ ազդեցություն ձեռք բերել Մուսթաֆա Բ սուլթանի վրա եւ նրա օգնությամբ հագուրդ տալ



իր հակաեվրոպական ձգտումներին: Նա վերացնում էր ամեն ինչ եւ ամեն անձի, որը եվրոպացիների հետ հարաբերությունների մեջ էր: Ավետիքը Ֆեյզուլլահի հովանավորյալն էր, սակայն կարողանում էր լատինների եւ դեսպան Ֆերիոլի հետ խաղաղարար հարաբերություններ մշակել ու նրանց վստահությունը ձեռք բերել: Բայց ժողովրդի մեջ աճում էր դժգոհությունը Ֆեյզուլլահի դեմ: Զինվորականները հատկապես գրգռվեցին, երբ մեծ վեզիր Տալտապան Մուսթաֆա փաշան Ֆեյզուլլահի ամբաստանությամբ սուլթանական հրամանով խեղդամահ սպանվեց: Նրա տեղն զբաղեցրեց Ռամի Մեհեմեդ փաշան, որը Ֆեյզուլլահի մտերիմն էր եւ անգամ զինվորական էլ չէր: Սուլթանի՝ Ադրիանուպոլսում գտնվելը եւ զեխ կյանքով ապրելը բողոքներ առաջ բերեցին, եւ Կ. Պոլսում ապստամբություն բռնկվեց. ենիչերիները պահանջեցին սուլթանի վերադարձը Կոստանդնուպոլիս, ինչպես նաեւ Ֆեյզուլլահի ու նրա արբանյակների պաշտոնանկությունը: Ապստամբները կողոպտեցին շատ պաշտոնյաների ապարանքները եւ օրենսգետների պատգամախոսական ատյանից պահանջեցին իրենց գործի արդարացումն ու հռչակումը: Հատուկ պատգամավորություն մեկնեց Ադրիանուպոլիս, որի պահանջով Ֆեյզուլլահը պաշտոնանկ արվեց՝ իր որդիների եւ կողմնակիցների հետ, իսկ Մուսթաֆա սուլթանը խոստացավ վերադառնալ մայրաքաղաք: Հուլիսի 8-ին Ադրիանուպոլսից Կ. Պոլիս եկավ Ավետիք պատրիարքը՝ Ֆեյզուլլահի խորհրդով: Ճանապարհին Ռոդոսթոյի առաջնորդ Հովսեփ վարդապետ Կեսարացին եւ չեքմեճեցի մի այլազգի նրան զգուշացրին Կ. Պոլիս գնալու համար: Նա որոշեց գնալ Սկյուտար եւ տեղ հասավ հուլիսի 14-ին: Հնարավոր է, որ նա ինչ-որ առաջադրանք էր կատարում:

Ֆեյզուլլահի հետ մտերմության պատճառով Ավետիքն իր դեմ առաջ բերեց ընդդիմադիրների զայրույթը: Նրա դեմ ուղղվեց նաեւ դեսպան Ֆերիոլի կատաղությունը: Ֆեյզուլլահի անկումից հետո դժվար չէր սպասել Ավտիքի պաշտոնանկությունը: Պաշարվեց Ավետիքի տունը, եւ նա անգամ չփորձեց փախուստ տալ: Նա չէր հավատում Ֆեյզուլլահի անկմանը: Ավետիքը ձերբակալվեց, երկու օր պահվեց կալանքի տակ, իսկ հուլիսի 22-ին բանտարկվեց Եդիքուլեի աշտարակում, որը նախատեսված էր պետական անձանց համար: Հայերեն այն թարգմանվում է յոթնաբուրգ: Փնտրվում է նաեւ նրա փոխանորդ Հովհաննես Զմյուռնիացին, ինչը հավաստում է կաթոլիկների գրգռվելու մասին: Բայց նա դրանից էլ առաջ փախել էր Պարսկաստան կամ Աճեմիստան:

Ավետիքի բանտարկությունից հետո պատրիարքարանում երկամսյա անիշխանություն տիրեց: Սուլթանը ձգձգեց իր վերադարձը մայրաքաղաք, եւ այդ պատճառով հուլիսի 29-ին 200000 խռովարար զինվորների մի մասը գնաց Ադրիանուպոլիս: Նրանց միացան ենիչերիների գնդերը, եւ 1703 թվի օգոստոսի 11-22-ին Մուսթաֆան գահընկեց արվեց, եւ գահ բարձրացավ Ահմեդ Գ սուլթանը՝ Մուսթաֆայի եղբայրը: Մուսթաֆան բանտարկվեց եւ արքայազունների բանտում չորս ամիս անց՝ դեկտեմբերի 20-ից 31-ի միջոցին, մահացավ:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՄՈՍԿՎԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԵՐԻ ՕԾՈՒՄԸ



Հոկտեմբերի 23-ին, երբ Հայ Առաքելական Սբ Եկեղեցին նշում էր խաչի գյուտի տոնը, մոսկվաբնակ հազարավոր հայերի համար կրկնակի տոն էր, քանզի Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ պիտի օրհնվեին ու օծվեին Մոսկվայի նորակառույց եկեղեցական համալիրի մայր եկեղեցու գմբեթի խաչերը:

Պատմական այս օրվան սպասում էին բոլորը՝ շինարարները, բարերարները, հոգեւոր դասը, թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանն ու հավատացյալները: Նվիրական այս օրվան մասնակցում էին նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ տիկնոջ հետ, ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը, ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, բազմաթիվ այլ պաշտոնական անձինք ու հյուրեր: Արարողությանը, որպես երկու քույր եկեղեցիների դարավոր բարեկամության նշան, ներկա էին Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգեւորականները՝ Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի մետրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւի առաջնորդությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հանդիսապետությամբ սկսվեց խաչերի օրհնության եւ օծման արարողությունը: Հնչեց «Տեր Աստված մեր» աղոթքը, ապա Նորին Սրբությունը՝ մյուռոնաթափ աղավնին ձեռքին, մոտեցավ օծելու խաչերը: Հոգեւոր դասը երգում էր «Խաչի Քո Քրիստոս» շարականը: Տ. Եզրաս եպս Ներսիսյանը խնկարկեց սբ խաչը եւ ներկաներին, ովքեր հոգեւոր դասի հետ միաձայն փառաբանելով Տիրոջը՝ երգում էին «Ալելուիա»: Ողջ տարածքը թնդում էր հոգեպարար երգեցողությունից: Արարողության ավարտին հավատացյալները երկյուղով ու ակնածանքով մոտեցան համբուրելու սրբալույս մյուռոնով օծված սբ խաչը, որը մի քանի րոպե հետո պիտի բազմեր նորակառույց մայր եկեղեցու գմբեթին:

Այս առիթով Եզրաս սրբազանը, դիմելով ներկաներին, ասաց. «Աստվածադիր ու մեծասքանչ օր է այսօր, օր պատմական ու նվիրական, որի համար տքնել ու ջանացել ենք բոլորս միասին՝ բարերար թե շինարար, ճարտարապետ թե քանդակագործ՝ ապավինած Տիրոջ ողորմած կամքին, որ արժանանանք տեսնելու, ականատեսն ու մասնակիցը դառնալու մեր հավատքի հաղթական նշանի՝ այս սբ խաչի տեղադրման հոգեպարար արարողությանը՝ նորակառույց այս տաճարի գմբեթին՝ ի վկայություն առ Աստված մեր սիրո, ի վկայություն առ Մայր Աթոռ Սբ Էջմիածին մեր նվիրումի եւ առ մայր հայրենին մեր հավատարմության: Փառք ու գոհություն Բարձրյալին, որի երկնային բարեհաճությամբ վարձատրվեցինք այս շնորհով՝ վայելելու միաժամանակ նաեւ ներկայությունը աստվածօրհնյալ ազգիս հոգեւոր ու աշխարհիկ առաջնորդների: Որդիական սեր ու խոնարհում Ձե՛զ, Վեհափա՛ռ Տեր, որ ընդառաջ Ձեր հոգեւոր զավակների խնդրանքին, օրհնաբեր այցով եկել եք Սբ Էջմիածնից, որպեսզի Ձեր օրհնաբաշխ աջով, սրբալույս մյուռոնով օծեք խաչերը մեր տաճարի: Հարգանք ու երախտագիտություն ՀՀ մեծարգո նախագահին՝ տիար Ս. Սարգսյանին, ով իր վսեմաշուք ներկայությամբ հավելում ու կրկնապատկում է մեր ուրախությունը: Ուրախություն, որը, ինչ խոսք, արդյունք է նաեւ Ռուսաստանի Դաշնության պետական, հոգեւոր ու քաղաքային իշխանությունների դրսեւորած եղբայրական, ջերմ, բարե-





հաճ ու պատրաստակամ վերաբերմունքի, ինչը եւ առավել զորանում է հենց այս խորհրդով: Այս պահին մեր աղոթքն ու հայցն է առ Տերը երկնավոր, որ պահի ու պահպանի ամուր ու անսասան հավատակից ու խաղաղասեր մեր երկու ժողովուրդների, բարեկամ պետությունների ու քույր եկեղեցիների դարավոր եղբայրությունը: Վեհափառ Տե՛ր, հայցում ենք Ձերդ Սրբության աղոթքը, օրհնությունն ու պատգամը աղոթակից Ձեր զավակներին»:

Ապա ներկաներին հայրապետական իր խոսքն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ գոհություն հայտնելով բազմողորմ ու բարեգութ Աստծուն, Ում կամքով կառուցվեց Մոսկվայի այս սուրբ տաճարը: Վեհափառ Հայրապետն օրհնեց նաեւ շինարարներին, բարերարներին, թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանին ու հավատավոր հայորդիներին, ովքեր իրենց ջանադիր ու նվիրյալ աշխատանքով կառուցեցին Տիրոջ տունը:

Ապա Եզրաս սրբազանն ու շինարարները վերամբարձ կռունկով բարձրացան դեպի գմբեթը, որպեսզի Տիրոջ սբ նշանը՝ հաղթական խաչը, տեղադրեն առաջնորդանիստ եկեղեցու գմբեթին: «Այս եկեղեցին մեր պարծանքն է, մեր նկարագիրը, մեր միասնականության վկայությունը: Ես անչափ ուրախ եմ, հոգիս ցնծում է»,- ասաց Արթուր Չիլինգարովը: Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը եւս հիացմունքով խոսեց եկեղեցական համալիրի մասին՝ այն համարելով պատկառազդու եւ հույս հայտնեց, որ Ռուսիո հողում կառուցված եկեղեցին փոքրիկ Հայաստան է դառնալու ռուսաստանաբնակ հայության համար: Երեւանից այս առիթով ժամանած՝ համալիրի գլխավոր ճարտարապետ Արտակ Ղուլյանը հուզված էր, որ վերջապես ավարտին են մոտենում համալիրի շինարարական աշխատանքները, եւ խաչերի օծումով ազդարարվում է մոտ ապագայում եկեղեցու բացման բարի լուրը:

Մայր տաճարի գմբեթի ոսկեզօծ վեց խաչերը պատրաստվել են Ալեքսանդրովսկ քաղաքի մեքենաշինական գործարանում՝ բարերարությամբ գործարանի տնօրեն Գեւորգ Մեհրաբյանի: Գմբեթի գլխավոր խաչն ունի 7, իսկ մնացյալ 5 խաչերը՝ 4 մետր բարձրություն:

***Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան***



# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
## (1897-1937)

*Սկիզբը՝ թիվ 15-19*

**ԴԱՍԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ:** Ստեղծագործական նոր որոնումների ճանապարհին Չարենցը գրում է շրջադարձային *«Պոեմ հերոսականը»* (1925) եւ լուրջ գեղագիտական նախադրյալներ ստեղծում *«Էպիքական լուսաբաց»* (1930) ժողովածուի համար: Մինչ այդ նա տպագրում է *«Երեւանի ուղղիչ տնից»* (1927) հուշ-ակնարկը եւ *«Խմբապետ Շավարշը»* (1929) պոեմը:

**«Երեւանի ուղղիչ տնից»** երկը բանտում, որն այն ժամանակ կոչվում էր ուղղիչ տուն, Չարենցի անցկացրած օրերի պատմությունն է: Հանցագործների աշխարհ, մարդկային ճանաչողության նոր եզրեր, նոր հարաբերություններ: Չարենցը բնօրինակային հավաստիությամբ նկարագրում է իրեն հանդիպած մարդկանց կյանքը, պատկերում հանցանքի ընկալման նրանց հոգեբանությունը եւ անգամ կյանքի հատակում հայտնվածների մեջ հայտնաբերում առաքինության բարձր գծեր:

**«Խմբապետ Շավարշը»** պոեմն իր ոճի ու պատումի բնույթով նաեւ բանալի է «Էպիքական լուսաբացում» զետեղված *«Էպիքական Ֆրագմենտներ»* եւ *«Չափածո նովելներ»* բաժինների համար: «Խմբապետ Շավարշը» պոեմով ժամանակի գրական նեղ ըմռնումների մեջ Չարենցը կատարում է ստեղծագործական մեծ խիզախում: Նա վերակոչում է կենսական նյութի գեղարվեստական պատկերման պատմահոգեբանական կողմը: Այս կողմնորոշմամբ նա ստեղծեց խմբապետ Շավարշի ե՛ւ քաղաքացիական, ե՛ւ անհատական դրամատիկ նկարագիր ունեցող գրական կերպարը: Ժամանակը 1918 թ. հայ ժողովրդի պատմությունն է: Ժամանակի պատմաքաղաքական իրադարձությունների հենքին էլ ուրվագծվում է Շավարշի կերպարը: Նա մի հաղթ տղամարդ է, կյանքը պատերազմների մեջ անցկացրած մի զորական, որն ահա Խնուսից բերել է գաղթականների հերթական խումբը: Կրակներում բովված այդ խմբապետն ատում է պուդրայած երեսներով եւ պատերազմ չտեսած ռուսահայ սպաներին, ովքեր ցանկանում են իր նմաններին դարձնել ձեռքի խաղալիք: Դրոն՝ իգդիրցի նախկին խմբապետը, այդ սպաների հետ է եւ ցանկանում է դառնալ ռազմական նախարար: Եռում են փառքի ու իշխանության հասնելու մոլեգին կրքերը, եւ շատերն են զոհ գնում դրանց:

Դրոն կանչել է Շավարշին: Շավարշը կասկածանքների մեջ է՝ գնա՞լ, թե՞ չգնալ:

Շավարշի կերպարը Չարենցը ներկայացնում է առանց համահարթեցման եւ հոգեբանական վիճակների համակողմանի ընդգրկումով: Նա մի կողմից ներկայանում է խմբապետ մաուզերիստին բնորոշ կատաղի հատկանիշներով, մյուս կողմից նա նաեւ հայրենիքի զինվոր է, որ ժողովուրդ է փրկել կործանումից եւ հիմա մտահոգված է նրա ճակատագրով: Մեկ պահի մեջ, որը Շավարշի կեսգիշերային գինարբուքն է, Չարենցը խտացնում է իր հերոսի հոգեբանության հիմնական գծերը: Գեղարվեստական այս հնարանքը մի քանի տարի անց նա օգտագործեց նաեւ «Դեպի լյառը Մասիս» պոեմում:

«Խմբապետ Շավարշը» պոեմով Չարենցը քնարական ինքնարտահայտումներից մուտք գործեց վիպականության (իր առաջիկա գրքի վերնագրով՝ էպիքականության) անկաշկանդ ու բաց տարածությունները: Ամբողջ **«Էպիքական լուսաբաց»** ժողովածուն բանաստեղծի նոր գեղագիտության արտահայտությունն է, որի մեջ ծրագրային հրովարտակի պես առանձնանում են *«Թուղթ բանաստեղծ բարեկամիս՝ NN-ին, գրված Երեւանից»* եւ *«Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից»* ծավալուն երկերը:

Դրանցում արծարծվում է գրականության մեջ իրական մարդու հոգեբանության հարցը, եւ քննադատական խոսքեր են ուղղվում սխեմատիզմի մեջ խարխափողներին.

*Եվ ի՞նչ... այս բորբ, այս կենդանի.*
*Հույզերը հորդ երգելու տեղ -*
*Միաչքանի, միտանի*
*Մարդն են երգում հիմա անթեւ.*
*Մարդն են երգում, որի կրծքում*
*Երգեհոն է դրված կարծես,*
*Որ ճիչեր է միայն փչում,*
*Չունի ո՛չ խանդ, ո՛չ խինդ, ո՛չ սեր...*

Չարենցը փառաբանում է կյանքի «բազմազեղուն ամբողջությունը», որը պետք է ապրել ու սիրել *«զգացմունքների հործանքով բեղուն»*: Այդ տրամադրությունների պոռթկուն արտահայտությունն է *«Օվկիանի երգը»*, որի ելակետն ու չափանիշը բնության ազատ ու հորդուն տարերքն է: Իր այս գեղագիտությունը մարմնավորելու նպատակով Չարենցն ստեղծում է ծրագրային-հրովարտակային պոեզիայի այնպիսի հրաշալի նմուշներ, ինչպիսիք են *«Երգ մաքառումի»*, *«Ես այն չեմ այլեւս»*, *«Խոհ»* բանաստեղծությունները: Բանաստեղծը հետեւողականորեն արծարծում է ժամանակը նորովի ու խոր պատկերելու հիմնահարցը: Դա նախ՝ ազգային կյանքի բախտորոշ իրադարձությունների գեղարվեստական մարմնավորումն է, ապա՝ քաղաքական կյանքի պատմությունը: Դրան հաջորդում են մանկության վերհուշն ու գործող առօրյան (*«Homo Sapiens»*, *«Գանգրահեր տղան»* եւ այլն):

Չարենցն օգտագործել է չափածո նովելի տեսակը: Այդպես գրված չորս երկերը փոքրիկ պատմություններ են, որոնք ունեն հերոսներ, գործողություն եւ նովելային անակնկալ կտրուկ ավարտ: Այդ գործերին բնութագրական են ժամանակային որոշակի դասավորությունը եւ կառուցվածքը: *«Homo Sapiens»*-ում վերակոչվում է անցյալի իրականությունը՝ իբրեւ հուշ, *«Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»* երկի մեջ անցյալը հառնում է իբրեւ տեսիլք: *«Մեծ առօրյան»* երկի գործողություններն անցյալից տեղափոխվում են ներկա ժամանակի մեջ: *«Գանգրահեր տղան»* չափածո նովելում, իբրեւ տեսիլք, հառնում է ապագան:

**«Homo Sapiens»-ը** (լատիներեն՝ մտածող, բանական մարդ) Չարենցի պատանեկան տարիների կյանքի պատմությունն է: Ընդհանրապես՝ Չարենցն անհատական կենսագրության գրող է, բայց անհատականի մեջ նա միշտ էլ ընդհանրացնում է ժամանակի իրական պատկերը: Այստեղ նա մտաբերում է իր պատանեկության տարիները, հոգու աչքերով տեսնում իրեն՝ սեւ շապիկ հագին, գրքերը թեւի տակ, հորը, հայրենի Կարս քաղաքը, Կարսի այգին, վերապրում իր բանաստեղծական երազանքներն ու մարդկային ձգտումները:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՆԱՀԱՊԵՏ Ա ԵԴԵՍԱՑԻ
## (1691-1705)

*Սկիզբը՝ էջ 3*

Նոր սուլթանը զիջումներով կարողացավ խռովարարներին հանդարտեցնել: Նա եկավ Կոստանդնուպոլիս եւ սեպտեմբերի 6-ին Ֆեյզուլլահին հանձնեց խռովարարների ձեռքը, որոնք նրան սպանեցին, մարմինն այլանդակեցին եւ ծովը նետեցին: Հայ մեծավորները դիմեցին մեծ վեզիր Տամատ Հասան փաշային, եւ պետական հրովարտակով պատրիարքությունները բաժանվեցին: Կոստանդնուպոլսի պատրիարք դարձավ Գալուստ եպիսկոպոս Չեյթունցին, որ նաեւ Ամասիացի է անվանվել եւ ունեցել է Կայծակ մականունը: Նա ժամանակին եղել է Երուսաղեմի անվանական պատրիարքը: Երուսաղեմի պատրիարքության մեջ վերահաստատվեց Մինաս Ամդեցին, որը Կիլիկիայի նախկին կաթողիկոս Գրիգոր Պիծակի հետ անմիջապես մեկնեց Կ. Պոլսից: Վերջինս փորձել էր դիմել Հռոմին, սակայն հուսախաբ լինելով՝ համաձայնել էր գնալ Երուսաղեմ՝ որպես Մինասի օգնական: Գալուստի եւ Մինասի պատրիարքությունների հաստատումը եղավ 1703 թվի սեպտեմբերի 8-ին, այսինքն՝ Աստվածածնի ծննդյան տոնի օրը:

Այնուամենայնիվ Գալուստը ժողովրդի կողմից ընդունվեց ընդդիմադիր ցույցերով: Պահանջում էին Ավետիքի վերադարձը: Գործին խառնվեց դեսպան Ֆերիոլը, որն ատամ ուներ Ավետիքի վրա: Մեծ վեզիրը նրա խնդրանքով Ավետիքի 15 կողմնակիցների թիարանում բանտարկեց, իսկ Ավտիքին աքսորեց: Նրան կապկպված ուղարկեցին Ավրատ, որը փոքրիկ եւ ամայի մի կղզի էր՝ Ասորիքի առափնյա շրջանում՝ Լավոդիկիայի եւ Տրիպոլիսի միջեւ: Դա հին Արատոս կոչված կղզյակն է: Ֆերիոլին դա չբավարարեց եւ աշխատեց նրա աքսորն ու բանտարկությունը դարձնել ավելի դժնդակ: Նա կամենում էր իր զոհին պահել տալ ջրով լեցուն փակ բանտի մեջ:

Ավետիքն աշտարակում մնաց 51 օր: Իր խոսքերով՝ նա աքսորավայրում մնաց մեկ տարի՝ ծանր պայմաններում: Կաթոլիկները շատ են գրում իրենց կրած հալածանքների մասին, սակայն մոռանում են, որ Ավետիքը հենց կաթոլիկների պատճառով ենթարկվեց այդպիսի անտանելի հալածանքների:

Գալուստ պատրիարքի գործերը խաղաղ չընթացան, քանի որ Ավետիքի կողմնակիցները ջանք չէին խնայում՝ նրան ետ բերելու համար: Նրանք թախանձագին աղերսագրեր էին գրում սուլթանական արքունիք, խոստանում դրամ եւ անգամ ամբաստանում Գալուստին: Բայց Ավետիքի նախկին ֆեյզուլլահյան լինելը, ինչպես նաեւ դեսպան Ֆերիոլի եւ լատինների ու կաթոլիկացած խմբակի ջանքերը խափանում էին նրա կողմնակիցների գործողությունները: Ավելին. Ավետիքին պաշտպանելու համար նրանցից շատերին ենթարկում էին գանահարության եւ բանտարկության: 210 հարված ստացավ Աբրահամ վարդապետ Արզումանյանը, որը հայտնի էր Մուրթ կամ Ճանպապա մականունով: Գանակոծեցին Պետրոս վարդապետին, որն Ավետիքի քարտուղարն էր, երզնկացի երեք քահանաներին, բազմաթիվ անձանց էլ թիապարտության դատապարտեցին: Ուժեղ էր հակակրանքը Գալուստի նկատմամբ: Դրանից փորձեց օգտվել ավետիքյանների խմբից Մատթեոս Սարիի աշակերտ Ներսես վարդապետ Բալաթցին: Դրամ հավաքվեց, եւ դրանով ամբաստանությունները Գալուստի դեմ ուժեղացան: Ի վերջո, պաշտոնավարելով գրեթե 10 ամիս, Գալուստը պաշտոնանկ արվեց եւ թիարանում բանտարկվելու դատապարտվեց: Բայց նա դրանից կարողացավ խուսափել՝ փախչելով Ամասիա: Այսուհանդերձ՝ Ավետիքի հարցը չլուծվեց, քանի որ Ներսեսն ինքը դարձավ պատրիարք՝ 1704 թվի ապրիլի 25-ին: Այժմ հասարակության դժգոհությունն ուղղվեց Ներսեսի դեմ. գրվեցին ամբաստանագրեր, սակայն Տամատ Հասան փաշայի վեզիրության օրոք հաջողության չհասան: Ավելին. շատերը գանահարվեցին կամ բանտ ընկան: Վիճակը փոխվեց, երբ 1704 թվի սեպտեմբերի 17-ին՝ Խաչվերացի օրը, մեծ վեզիր դարձավ Գալայլը Ահմեդ փաշան: Նա բռնություններից հեռու էր, ուստի նրան կարողացան համոզել, որ Ավետիքն օտարազգիների դավաճանության զոհ է, եւ նրա վերադարձը կարող է հանդարտեցնել հայերին:

Մեծ վեզիրն Ավետիքին ազատելու հրովարտակ արձակեց, չնայած Ավետիքը կարծում էր, թե իր աղերսագրի շնորհիվ է դա եղել: Ներսեսը պաշտոնանկ արվեց. նրա պատրիարքությունը երկար չտեւեց, ըստ որում՝ ընդհատումով: Մինչեւ Ավետիքը կվերադառնար, Ներսեսը 1704 թ. հոկտեմբերի 6-ին կրկին պատրիարք դարձավ: Ավետիքն աքսորավայրից եկավ Բերիա, տեղի հայությունը նրան մեծապես օգնեց, հետո անցավ Երզնկա, բայց դեռ չհասած՝ հրաման ստացավ՝ վերադառնալ Կ. Պոլիս: Ներսեսը նորից պաշտոնանկ եղավ, եւ Ավետիքը կրկին դարձավ պատրիարք՝ 1704 թվի դեկտեմբերին:

*Շարունակելի*

***ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

## Գառնիի Սուրբ Մաշտոց Հայրապետ եկեղեցու վերաբացումը

Սեպտեմբերի 23-ին, հանդիսապետությամբ Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս Քարամյանի, տեղի ունեցավ Մաշտոց Հայրապետ (Սուրբ Աստվածածին) եկեղեցու վերաօծման արարողությունը: Նվիրատվությամբ Սամսոն Սարգսյանի՝ եկեղեցին համալրվել է եկեղեցական սպասքով, սրբապատկերներով: Հանդիսավոր արարողության ընթացքում օծվեցին եկեղեցու սուրբ Սեղանը, մկրտության ավազանը, սուրբ Թադեոս եւ սուրբ Բարթողիմեոս առաքյալների պատկերները:



Արարողությանը ներկա էին գյուղի հավատացյալ ժողովուրդը՝ Գառնիի հոգեւոր հովիվ Տեր Վրթանես քհն. Բաղումյանի գլխավորությամբ, ուխտավորներ, հոգեւոր հայրեր: Ելույթ ունեցավ Գառնիի մարզամշակութային պալատի երգչախմբի համույթը՝ տնօրեն Վաղինակ Թադեւոսյանի ղեկավարությամբ: Կատարվեց նաեւ մատաղի օրհնություն:

Արարողությունից հետո սրբազան հայրն իր օրհնության խոսքով դիմեց հավատացյալների բազմությանը, ուխտավորներին՝ հորդորելով զորավոր մնալ հավատքի մեջ, նախանձախնդիր լինել բնակավայրի հովանավոր սրբատեղիների նկատմամբ եւ պատասխանատվություն ցուցաբերել նախնիներից ժառանգած ավանդը սերունդներին անպակաս ու աննվազ փոխանցելու գործում: Սրբազան հայրը հույս հատնեց, որ եկեղեցու վերաբացումով Քրիստոսի լույսն ու հավատը պիտի ծավալվեն, ամեն հայի համար դառնան մեկ փոքրիկ նշխարի եւ իբրեւ հին ուխտատեղի՝ դեպի իրենց ուղղեն բազում ուխտավորների:

# ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է

## *Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.)*

## ՀԱՄԱԲԱՐԲԱՌ ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

**Յունիս, հուլիս եւ նոյեմբեր ամիսների հատորները՝ աշխատասիրությամբ Մ. Ապրեսյանի, Լ. Քարիմյանի եւ Լ. Սարգսյանի: Այս հատորների լույս ընծայմամբ համալրվեց «Յայսմաւուրք» ժողովածուի 12-հատորյա շարքը:**

**Ձեզ ենք ներկայացնում մի հատված (էջ 17-33) հուլիսի հատորից՝ աշխատասիրությամբ Լ. Քարիմյանի:**

### Յուլիս եւ Մարգաց ԻԶ

**B - Յայսմ աւուր գիւտ է պատուական տփին, յորում էր ամենասրբուհւոյ Աստուածածնին գլխադիրն, զոր տարան ի Կոստանդինուպաւլիս**

Երկու եղբարք էին հարազատք, եւ էին պատուով պատրիկք յաւուրս բարեպաշտ թագաւորին Լեւոնի: Եւ էին սոքա Արիոսի հերձուածովն: Եւ Աստուած ի ձեռն ամենասրբուհւոյ Աստուածածնին դարձոյց զնոսա յուղղափառութիւն: Եւ խորհեցան հաւատով ուխտ եղեալ գնալ յԵրուսաղէմ յերկրպագութիւն// սուրբ տեղեացն: Եւ ողջունեալ զթագաւորն ելին ի Կոստանդինուպաւլսէ: եւ յորժամ հասին ի Պաղեստին ի սահմանս Գալիլեացոց, տեսին բազում հիւանդս եւ ախտաժէտս, եւ խեղս, եւ կոյրս ի տան պառաւ կնոջ մի այրոյ: Եւ մտեալ տեսին ի ներքսագոյն տունն բազում ջահս եւ ղամբարս ի վառման, եւ խնկարկութիւն յոյժ: Տեղեկանային, եթէ՝ զի՞նչ իցէ ժողովս հիւանդաց, եւ կամ այնչափ լուսաւորութիւնն ի տանն: Եւ բռնադատեցին զիրեայ կինն, եւ պատմեաց նոցա, եթէ՝ յայդ տփիդ գլխադիրն է Մարիամայ՝ մաւրն Քրիստոսի, եւ ամենայն սքանչելիքն ի նմանէ լինին ի նեղեալսն:

Եւ յորժամ լուան երկու փառաւորեալ եղբարքն, իջավանեցան ի տեղին եւ զամենայն գիշերն աղաւթէին առ տապանակին: Եւ գաղտ ի կնոջեն առին զչափ տապանակին, քանզի փայտեղէն էր: Եւ ողջունեալք երկիր պագին տապանակին եւ գնացին յԵրուսաղէմ, եւ կատարեցին զուխտս իւրեանց: Եւ արարին փայտեա տապան ըստ չափոյ սրբապահ տփին, արարին եւ ոսկեթել ծածկոյթ նմա, եւ դարձան ի տուն հրէա կնոջն՝ բազում պարգեւս շնորհելով նմա: Եւ զգիշերն անհանգիստ փառաբանութիւն մատուցանէին Աստուծոյ եւ աղաչէին զամենասրբուհի Աստուածածինն, զի առաջնորդեսցէ նոցա, զոր խորհեալ էին առնել:

Եւ նախքան զհասարակ գիշերին, մինչդեռ ամենեքին ի քուն էին, առին գաղտ զտապանակն՝ զանկողոպտելի գանձն, ետուն ի հաւատարիմ ծառայս իւրեանց եւ յուղարկեցին յառաջագոյն: Եւ եդին ի տեղին զմիւս տապանակն, զոր կազմեցին յԵրուսաղէմ եւ ծածկեցին ոսկեթել ծածկոցովն, եւ ընդ առաւօտն հրաժարեցին ի հրեայ կնոջէն եւ գնացին ի Կոստանդինուպաւլիս: Եւ թողին արտաքոյ զպատուական տուփն եւ պատմեցին թագաւորին զԱստուծոյ տուեալ պարգեւսն: Եւ ել թագաւորն եւ հայրապետն եւ ամենայն ժողովուրդք քաղաքին՝ արք եւ կանայք եւ մանկունք ընդ առաջ, եւ լուցեալ մոմեղինաւք եւ բուրվառաւք եւ անուշահոտ// խնկաւք տարան յեկեղեցի ամենաւրհնեալ Աստուածածնին, որ կոչի Վլաշեռնաս, եւ արարին տաւն մեծ եւ հռչակաւոր ի Մարգաց ԻԶ եւ Յուլիս Բ: Կազմեցին եւ տապանակ՝ ոսկի ակամբք եւ մարգարտովք, եւ փոխեցին անդ զպատուական եւ զսուրբ գլխադիրն: Շինեցին եւ գեղեցիկ եկեղեցի եւ մինչեւ ցայսաւր մեծ պահապան եւ աւգնական եւ ամուր պարիսպ է քաղաքին Կոստանդինուպաւլսի:

Վենետիկ 710, 541բ-542բ
Վենետիկ 402, 444բ-445ա
ՄՄ 7361, 138ա-բ
Մորգան 622, 351-352

**A - Տաւն է մեծահանդէս սուրբ տապանակին Աստուծոյ, զոր արար Մովսէս**

Եւ խաւսեցաւ տէր ընդ Մովսեսի եւ ասէ. «Արա՛ դու ինձ տապանակ յանփուտ փայտից: Զերկայնութիւն նորա արասցես Բ.




կանգուն եւ կէս, եւ զբարձրութիւն նորա կանգուն եւ կէս, եւ զլայնութիւն նորա կանգուն եւ կէս: Եւ պատեսցես զնա ներքոյ եւ արտաքոյ ոսկով սրբով եւ արասցես աղամանեակս եւ դիցես ի կողմանէ տապանակին: Եւ արասցես լծակս յանփուտ փայտից եւ պատեսցես ոսկով սրբով եւ ան//ցուսցես ընդ ողամանեակսն բառնալ նոքաւք զտապանակն: Եւ դիցես ի ներքս ի տապանակին զերկուս տախտակսն, զորս տացես քեզ, եւ արասցես զքաւութիւն յոսկոյ սրբոյ եւ դիցես ի վերայ տապանակին: Եւ արասցես քերոբս Բ. յանփուտ փայտից եւ պատեսցես ոսկով սրբով եւ դիցես ի կողմանէ տապանակին՝ զմինն յաջմէ եւ զմիւսն յահեկէ տարածեալ զթեւս իւրեանց, որք հովանի ունիցին ի վերա քաւութեանն: Եւ երեւեցայց քեզ անտուստ եւ խաւսեցայց ընդ քեզ»: Եւ արար Մովսէս զամենայն, զոր հրամայեաց նմա Տէր:

Եւ հրաման ետ Յեսու քահանայիցն, որք կրէին զտապանակն, կալ ի մէջ ջրոյն Յորդանանու: Եւ իբրեւ մխեցան ոտք քահանայիցն կրելեաց տապանակին ի ջուրն Յորդանանու, դարձաւ ջուրն Յորդանանու ի տեղի իւր յԱդրամիտէս քաղաքէ, որ է մասն Ինթկարիաթարիմայ: Եւ որք իջանէինն, իջին ի ծովն աղի, եւ անց ամենայն ժողովուրդն ընդ ցամաք ընդ Յորդանան:

Եւ հրաման ետ Դաւիթ արքայ ամենայն ժողովրդեանն հանել զտապանակն ի տանեն Աբեդդարայ եւ տանել ի տուն Դաւթի:

Եւ ելին ծնծղայիւք եւ պարուք եւ նուագարանաւք: Եւ Դաւիթ զգեցեալ էր պատմուճանս հանդերձեալս եւ երգէր եւ նուագէր առաջի Տեառն: Եւ բերին զտապանակն եւ եդին ի տեղոջ իւրում, զոր պատրաստեաց նմա Դաւիթ: Եւ բաշխեաց Դաւիթ ի Դանայ մինչեւ ի Բերսաբէէ իւրաքանչիւր ումեք յառնէ մինչեւ ցկին բլիթ մի հաց եւ պատառ մի ի կասկարայից եւ քանքար մի ի տապակէ: Եւ գնաց ամենայն ժողովուրդն իւրաքանչիւր ի տուն իւր եւ գոհութեամբ փառս ետուն Աստուծոյ:

Վենետիկ 710, 541ա-բ
Վենետիկ 402, 444ա-բ
ՄՄ 7361, 137բ-138ա
Մորգան 622, 350-351

**b. Եւ Բ.** զինուորացն, որ գլխատեցին զՊաւղոս եւ քարկոծելով կատարեցան:

**a. Լատինն՝** Վկայութիւն **Բրոդէսի եւ Մարդիանի** ի Փռ՝՝:

**c. Եւ** վկայութիւն սրբուհոյն **Պոնդենդիանի**, եւ այլոցն ի Հռոմ:

**Յայսմ աւուր** հռոմն յիշատակի **Յոբնադիոս** Երուսաղէմի եպիսկոպոսի:

**Յայսմ աւուր** վկայութիւն սրբոցն **Արիստոնիսի, Կրեսկենդանի**:

**Եւ** ննջումն սրբուհոյ **Մօնէճօն** Տիսբոնի հաւատաւորի:

ՄՄ 4683, 552բ

### Յուլիս Գ եւ Մարգաց ԻԷ

**B - Յայսմ աւուր վկաութիւն սրբոյն Կոյինդոսի**

Սուրբ վկայն Քրիստոսի Կոյինդոս ծնեալ եւ սնեալ ի Փռիւգիայ եւ վարժեալ ի բարեպաշտութիւն եւ ի գործս բարիս: Եւ գնաց ի գեաւղն, որ կոչի Եւուղիդայ, եւ առնէր ողորմութիւն կարաւտեալ աղքատաց եւ անուամբն Քրիստոսի Տեառն մերո// բժշկէր զամենայն հիւանդսն եւ զդեւսն ի մարդկանէ հալածէր: Հանդիպեցաւ ի գեաւղն Ռուփինոս դատաւորն եւ ըստ հրամանի կռապաշտ արքային Աւրեղիանոսի թագաւորին հալածէր զքրիստոնեայսն:

Շարունակությունը՝ էջ 7

# ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ



Սկիզբը՝ էջ 4

Հետամուտ կերպավորման իրապաշտական արվեստին՝ Չարենցն ստեղծում է իր պատանեկան շատ տպավորիչ ու վիպական կերպարը: Հուշի անդրադարձով վերակենդանանում են անցյալի դիմագծերը.

*Տասներեք թվի ամառը, հունիսին,*
*Նաիրյան քաղաքի մի փողոցով խաղաղ*
*Անցնում էր, հոգսը երեսին,*
*Տասնվեց տարեկան մի տղա:-*
*Վտիտ էր: Միջահասակ: Ուսերը նեղ:*
*Գունատ մազեր ուներ, գունատ ճակատ:*
*Հագին սեւ շապիկ սատինե՝*
*Խունացած, առնըվազը երեք ամառ*
*հագած:*

*Դեղին երիզներով դպրոցական*
*գլխարկը*
*Գանգուր, խիտ մազերին նստել էր ծիգ:*
*Նա գնում էր դանդաղ, քայլում էր*
*գլխահակ*
*Անտարբեր շրջապատին, ինչպես ծի:*

Այնուհետեւ նկարագրվում է բախումը շրջապատի հետ, գավառական քաղաքի մեղկալ անդորրը, պատանի բանաստեղծի հոգեկան պոռթկումն ու ընդվզումը, հոգեկան ու մտավոր հասունացման ընթացքը եւ նույն շրջապատն ու մարդկանց, որոնց մասին Չարենց դարձած այդ պատանին երեք տարի անց պիտի գրեր. *«Դեմքերը, ախ, բութ են այնպես՝ կարծես շինված են տապարով»*: Այդպես էր, որովհետեւ այդ միջավայրում նրան ոչ ոք չէր հասկանում: Անգամ երազած աղջիկը՝ իր դիցուհին, չի վերցնում նրա տված վարդը, չի զրուցում նրա հետ, եւ նա շրջապատի համար դառնում է օտար: Անշտապ շարադրանքով նա պատմում է այն մասին, թե հոգու ինչ երազներ ու թռիչքներ ուներ ինքը, եւ թե ինչքա՜ն մռայլ ու կործանարար էր շրջապատը, որը չէր հանդուրժում ոչ մի այլախոհի: Իսկ պատանի հերոսը իր քաղաքի բարքերի ու շրջապատի մարդկանց համեմատ այլախոհ էր, որովհետեւ երազի ճամփորդ էր, խառնվածքով՝ բանաստեղծ: Ահա նա կարդում է մի գիրք, որը բաց է անում նրա ներաշխարհը: Այդ գիրքը լեհ գրող Ստանիսլավ Պշիբիշեւսկու «Homo Sapiens» վեպն է.

*Նա կարդում էր անհագ, լափելով*
*Էջերը, գլուխները:- Գրքի թերթերից*
*Մեկը, տիտանային, կարծես շանթ էր*
*թափում*

*Եվ այրում էր հոգին, իր կրքերը:*
*Գլուխը վառվում էր: Սիրտը*
*Թրթռում էր:- Ուզում էր թռչի*
*դո՛ւրս, դո՛ւրս:-*

*Տագնապով դարձնում էր թերթերը*
*Ու կարդո՛ւմ, կարդո՛ւմ, կարդո՛ւմ...*

Պատանի բանաստեղծը գրքերով իր առջեւ բացում է մի անեզր տիեզերք: Այդ մասին հետո նա պիտի գրեր. *«Օ՜, գրքերի աշխարհը - տիեզերք է անեզր»*: Այսպես գավառական քաղաքում գրքերի հոգեկան սնունդով հասունանում է հանճարը: Պատանի հերոսը ներքին մղումով է իր մեջ ուժգնացնում է բանաստեղծ լինելու եռազանքը, որպեսզի դառնա բանական մարդ, դառնա գերմարդ, այդպես բարձրանա իր գորշ շրջապատից ու մոռանա նրանց, ովքեր համառորեն ջանում էին կոտրել իր բանաստեղծական երեւակայության թեւերը:

**«Գանգրահեր տղան»** չափածո նովելը կապված է «Homo Sapiens»-ի հետ: Անցյալի եւ ընթացիկ կյանքի գեղարվեստական յուրացումով Չարենցը ճանապարհ էր հարթում դեպի ապագան: Ներկայի դիրքերից ժամանակային նույն հակադարձ հեռավորության վրա են երկու չափածո նովելների պատանի հերոսները՝ այն տարբերությամբ, որ առաջինն ապրել է անցյալում, իսկ երկրորդը պիտի ապրի գալիքում:

Այնպես, ինչպես Չարենցը փակում էր աչքերը եւ վերհիշում իր պատանությունը, այդպես էլ՝ աչքերը փակ, նա պատկերացնում էր գալիք օրվա գանգրահեր պատանուն: Գանգրահեր տղան, անշուշտ, գալիքի խորհրդանշանն է: Մարդկության տարբեր հասակներն ի մի բերող բանաստեղծը, իրեն տեսնելով անցյալի մեջ, կարող էր իրեն նաեւ պատկերացնել ապագայում՝ որպես հուշ ու հիշատակ այլոց համար:

«Գանգրահեր տղան» չափածո նովելի նկարագրությունները ներքուստ հակադրված են «Homo Sapiens»-ի պատկերային համակարգին: Այնտեղ փողոցը հորանջում էր քնից, տները մեկ հարկանի էին ու իրար կպած, *«Իսկ մեջտեղում շոսսե:- // Փոշոտ, նեղ, ինչպես գյուղական սայլուղի»*, հազվադեպ միայն՝ մայթերին մարդիկ էին երեւում եւ արագ անհայտանում, իսկ այստեղ՝

*Ոլորապտույտ ձգվում է շոսսեն*
*Նոր Երեւանից դեպի Արարատ.*
*Ինչքա՞ն են արդյոք տարիներ հոսել*
*Մինչեւ գարնային այս օրը զվարթ:*
*Շոսսեի երկու կողմերում ահա*
*Տներ, փողոցներ ու գործարաններ,*
*Կանաչ պարտեզներ, ծաղիկներ ազատ,-*
*Այդ ո՞վ է արդյոք այսքանը ցանել...*

Առնվազն երեք ամառ հագած խունացած սեւ շապիկով տղային փոխարինում է պայծառ աչքերով պատանին՝ *«Հագին սպիտակ, կապտերիզ շապիկ»*: Խանդավառ, տոնական տրամադրությամբ, ջինջ օրվա մեջ փայլող արեւի ջերմությամբ ու շողարձակումով Չարենցը տեսիլքի պես պատկերացնում է երազային ապագան, որի մեջ ապրում է իր ավարտված կյանքի հիշատակը: Այս գործը շարունակվող կյանքի փառաբանություն է. *«Լսո՞ւմ ես՝ այդտեղ իմ սիրտն է թաղած,- // Կոխրտի՛ր նրան քայլերով քո լույս, // Օ՜, դո՛ւ, գալիքի գանգրահե՛ր տղա, // Մեր լա՜վ գալիքի ոսկեհե՛ր մանուկ...»*:

Սակայն օրերը Չարենցի համար թույն ու մաղձ էին թորում, եւ նա նույնիսկ շիրիմ չունեցավ, որ գանգրահեր տղաների սերունդները գնային այցի:

Ա. Բակունցին հղած *«Թղթի»* մեջ մեծ արվեստի երազանքով Չարենցն այսպիսի տողեր էր գրում.

*Տրված է մեզ երգի անեզրական շնորհք,*
*Տրված է թափ, թռիչք, մտքի*
*խոյանք ու թեւ,-*
*Իսկ մենք սահում ենք դեռ զարմանալի*
*թեթեւ,*
*Այն փոշեպատ, մաշված ուղիների*
*հունով...*
*Որ հունն է բութ մտքի, տրաֆարետի,*
*...Հասել ենք մենք արդեն այն*
*սահմանին, որից*
*Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք: -*
*Սին տենչերի փոշին մեր խոհերից*
*քերենք*
*Ու ճանապարհ ընկնենք, մե՜ծ*
*ճանապարհ նորից:*

Մեծ ճանապարհի պատգամներն իրագործեց դարձյալ ինքը՝ գրելով *«Գիրք ճանապարհի»* ժողովածուն:

**«Գիրք ճանապարհի»-ի պատմափիլիսոփայությունը:** Չարենցն արտակարգ ուժով եւ կենտրոնացմամբ օժտված բանաստեղծ էր: Այդ տարերքն էլ վեց ամսում ծնունդ տվեց *«Գիրք ճանապարհի»* ժողովածուին: Բանաստեղծի այդ վերջին մատյանն ընդգրկում է տասը պոեմ, *«Տաղեր եւ խորհուրդներ»*, *«Զանազան բանաստեղծություններ եւ թարգմանություններ»* շարքերը: Հավատաքննիչների ստիպմամբ գրքից հանված *«Աքիլե՞ս թե՞ Պյերո»* երկի փոխարեն դարձյալ կարճ ժամանակամիջոցում գրեց *«Արվեստ քերթության»* եւ *«Գիրք իմացության»* շարքերը:

Շարունակությունը՝ էջ 6

# XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԸ

Հայ մշակույթի զարգացման գործում իր ծանրակշիռ տեղն է ունեցել Մխիթարյան միաբանությունը, որն անգնահատելի գործունեություն է ծավալել երեք ուղղություններով.

1. Հայ մշակույթը եւ նրա համաշխարհային նշանակություն ունեցող գանձերը եվրոպական երկրներին ու նրա ժողովուրդներին ծանոթացնելու ասպարեզում:

2. Հայ ժողովրդին հաղորդակից է դարձրել եվրոպական զարգացած երկրների մշակույթին:

3. Նոր աստիճանի է բարձրացրել հայագիտության բոլոր բնագավառները, մեծ ներդրում ունեցել հայոց պատմության եւ պատմագրության, փիլիսոփայության, լեզվի, լեզվաբանության եւ բառարանագիտության, բնական գիտությունների, դրամագիտության զարգացման բնագավառում:



Այդ բոլորն իրականացվել է հայրենի եզերքից հեռու, երկրորդ փոքրիկ հայրենիք դարձած երկու տարբեր օջախներում, որոնք թեպետ, ճակատագրի բերումով, բաժանված էին, բայց հոգեպես միշտ միասին էին՝ սրբագործելով իրենց հիմնադրի՝ Մխիթար աբբահոր հիշատակն ու ավանդները: Այս երկու միբանություններն էլ իրենց անգնահատելի ծառայությունն են մատուցել հայ մշակույթի համարյա բոլոր բնագավառներում: XX դար ոտք դրած համայն հայությունն ի խորոց սրտի իր խոսքն ուղղեց Աստծուն՝ շնորհակալություն հայտնելով Մխիթարյան երկու միաբանությունների գործունեության համար: 1901 թ.՝ դեռեւս հուլիս ամսին, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, համախմբվելով աբբահայր Իգնատիոս Կյուրեղյանի շուրջը, հաղորդեց ի լուր աշխարհի, որ պատրաստվում է իր կազմավորման երկհարյուրամյակը նշել 1901 թ. սեպտեմբերի 8-ին՝ սուրբ Տիրամոր ծննդյան օրը՝ հիմք ընդունելով այն փաստը, որ 1701 թ. սեպտեմբերի 8-ին Մխիթար Սեբաստացին իր շուրջն է համախմբել 7 դպիր եւ 4 աբեղա ու ստեղծել այս միաբանությունը, որի գաղափարը նրա մոտ ծագել էր Սեւանա կղզու վանքում՝ Տիրամոր պատկերի առաջ աղոթելիս:

1901 թ. հուլիսին ստեղծվում է Կարգադրիչ մարմին՝ Հուսիկ Մեհրաբյանի ղեկավարությամբ եւ Եսայի Տայեցու մասնակցությամբ, ովքեր դավանանքային խտրության չդնելով՝ հրավերքներ են ուղղում ամբողջ հայության հոգեւոր առաջնորդներին, հայտարարություններ տպագրում հայ եւ եվրոպական մամուլի բազմաթիվ օրգաններում՝ գտնելով, որ այդ միջոցառումը սոսկ վանական նկարագիր չունի եւ քանի որ շոշոփում է համամարդկային, համաեվրոպական ու համահայկական խնդիրներ, ցանկացած անձ կարող է իր մասնակցությունը բերել այդ տոնախմբությանը: Հատուկ անվանական հրավիրագրեր են ուղարկվում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանին, Հռոմի պապին, Կ. Պոլսի հայ առաքելական եւ կաթոլիկ պատրիարքներին՝ խնդրելով, որ եթե նրանք չկարողանան իրենց ներկայությամբ պատվել տոնակատարությունը, ապա այնտեղ ուղարկեն իրենց ներկայացուցիչներին: Այդ հոբելյանի տոնակատարությանը Վենետիկի միաբանությունը նվիրեց մի ծավալուն աշխատություն՝ «Յիշատակարան երկհարիւրամեա յոբելինի մխիթարեան միաբանութեան ի Վենետիկ 8 սեպտեմբերի 1701-1901 սեպտեմբեր 8» խորագրով: 218 մեծադիր էջերից բաղկացած «Յիշատակարանը» ամբողջական պատկերացում է տալիս իր ժամանակակցին եւ հետագա սերունդներին՝ այդ հանդիսավոր միջոցառման ընթացքի վերաբերյալ: Մասնակիցների ելույթները, հղված հեռագրերը, միաբանության անդամների գործունեության բացահայտումները, տոնակատարության ընթացքում հնչած գնահատականները արժեւորում են միաբանության անցած 200-ամյա (այժմ արդեն՝ 300-ամյա) ուղին: Հայության առաջ նրանք բնորոշվում են իբրեւ «անձնուէր զինուորներ», որոնք «հիմնեցին մեր գրական շենքը եւ զայն հետզհետե վեր բարձրացնելու միջոցներ հայթայթեցին մեզի նախնեաց գրքերու հրատարակութեամբ, մեր դասական լեզուն, մեր պատմութիւնը, աշխարհագրութիւնը եւ հնութիւնները մշակելով, օտար մատենագրութեանց հրաշակերտները թարգմանելով... տպարաններ ու դպրոցներ բանալով, գիտական թերթեր հիմնելով, հայկական Ակադեմիա մը հաստատելով եւ մրցելով եվրոպացւոց հետ՝ ինչ բանի մէջ որ կարելի էր, ազդուելով անոնցմէ, իւրացուցին անոնց ձիրքերը... առանց կորսնցնելու ազգային նկարագիրն ու ոգին: Այդ ամենը ըրին անոնք՝ անձնական ուժերով, անխառն օտար տարրերէ»:

Հոբելյանի տոնակատարության մասնակիցները համեստ եւ չափավոր արտահայտություններով գծում էին միաբանության անցած երկհարյուրամյա փշոտ ու տառապալից, բայց արգասաբեր ուղին: Առավել բարձրարժեքն օտարազգի մասնակիցների հնչեցրած գնահատականներն էին՝ ուղղված ոչ միայն միաբանության անդամներին, այլ նաեւ նրանց ծնող եւ սնող ժողովրդին: Այդ տեսակետից պետք է ընդգծել Վենետիկի պատրիարք, հռոմեական կարդինալ Հովսեփ Սարտոյի խոսքը. «Եվրոպա՝ Արեւելքի կպարտի իրեն կրոնը եւ զարգացումը. այդ Արեւելքի հարազատ որդիներեն է հայ ազգը, որ հազարումեկ ճնշումներու ներքեւ չէ կորսնցուցած իրեն հստակ նկարագիրը, իրեն գեղեցիկ ձիրքերը, որոնցմով ինքը ներկա զարգացած Արեւմուտքին կը պատկանի, քան Արեւելքի»: Կարդինալն այդ բացառիկ ազգի զավակներին մաղթում է հարյուրամյակների եւ հազարամյակների կյանք՝ ի պայծառություն իրենց ազգին եւ հայրենիքին, որովհետեւ «Հայաստանը մեր ամենուն Հայրենիքն է»: Միաբանության հուզված անդամները շնորհակալություն են հայտնում եւ աբբահոր շուրթերով խոստովանում, որ Վենետիկն էլ իրենց երկրորդ հայրենիքն է, որովհետեւ նրա «մայրական գուրգուրանքով» են պահպանել իրենց գոյությունը: Այդ տոնակատարության ժամանակ տեղի է ունենում Մխիթար Սեբաստացու արձանի հիմնարկեքը՝ աբբահայր արք. Իգնատիոս Կյուրեղյանի, Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի ներկայացուցիչ, Եվրոպայի թեմի հոգեւոր առաջնորդ Գեւորգ եպս Յությունճյանի եւ Կ. Պոլսո հռոմեադավան հայոց պատրիարքի ներկայացուցիչ Ռուպյան եպիսկոպոսի անմիջական մասնակցությամբ: «Յիշատակարանը» հուզիչ պատկերացում է տալիս Մխիթարյան միաբանության Վենետիկի մասնաճյուղի երկհարյուրամյա հոբելյանի տոնակատարության համահայկական եւ համաեվրոպական ընդգրկումների մասին: Եվրոպայի օտարազգի հոգեւոր եւ քաղաքական գործիչների, աշխարհասփյուռ հայության տարբեր գաղթօջախների, մայր հայրենիքի երկու հատվածների հասարակական եւ հոգեւոր գործիչների նամակները, հեռագրերը, գիտական արժեւորումներն ու գնահատականները ներկայացնում են այն համակ սերն ու գուրգուրանքը, որ ցուցաբերում են ողջ հայությունը եւ քաղաքակիրթ Եվրոպան՝ այդ միաբանության անդամների եւ նրանց ծավալած գործունեության նկատմամբ: Ամենահուզիչն այն է, որ այստեղ ընդհանրապես չի խոսվում դավանական տարբերությունների, միաբանության տարբեր թեւերի տարաձայնությունների մասին, այլ ընդգծվում է նրանց համամարդկային, համազգային գործունեության մեծ նշանակությունը: Պատահական չէ, որ հղած հեռագրերի մեջ առաջնակարգ տեղ է տրվում Վիեննայի Մխիթարյան միաբանության աբբահայր Արսեն Այտընյանի հեռագրին:

Շարունակությունը՝ էջ 8

# ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ



Սկիզբը՝ էջ 5

«Գիրք ճանապարհին» բանաստեղծի ապրած կյանքի գլխավոր հանրագումարն է: Փիլիսոփայական ներքնատեսությամբ Չարենցը վերաքննում է պատմության քառուղիներով անցած ժողովրդի մաքառումների ուղին, իմաստավորում ստեղծագործ անհատի տեղն ու դերը ժողովրդի պատմության մեջ, բացահայտում ժամանակի քաղաքական իրադարձությունների անդրադարձն ազգային ճակատագրի վրա, ի մի բերում խոհերը քերթողական արվեստի մասին եւ նախանշում ոգեղեն կեցության ուղին:

**«Պատմության քառուղիներով»** պոեմում բանաստեղծը հանրագումարի է բերում հայ ժողովրդի անցած ամբողջ ճանապարհը: Ինչպես *«Վահագնում»*, այստեղ եւս Չարենցը քննության է ենթարկում առասպելների ու լեգենդների վերածված մեր պատմությունը:

Անցյալը նրան նույնիսկ ներկայանում է որպես *«անանցյալ անցյալ»*, որովհետեւ սերունդներին թողել է սոսկ բարոյական հաղթանակի փառքը, իսկ ոտքի տակ տրորվել ու բաժան-բաժան է եղել իրական հայրենիքը: Չարենցը, անշուշտ, ինչ-որ չափով ընկնում է ծայրահեղության մեջ, բայց դա գալիս է ցավի ահագնությունից, որովհետեւ սեփական աչքերով նա արդեն տեսել էր երկիր Նաիրիի կործանումը Վանից մինչեւ Կարս: Այս պոեմում Չարենցն ստեղծում է գայլի խորհրդանշանը, որը կարող էր հաղթանակի խորհրդանշան լինել, ինչպես հռոմեական պղնձյա գայլը, բայց հայոց աշխարհում միայն խեղճություն է բերել ու գուժել պարտություն.

*Տեսնում եմ ահավասիկ.-*
*Հին դարերի խորքում, ուղիներով մռայլ,*
*Քաղցած, քոսոտ, անբուրդ, դեպի*
*լյառը Մասիս*
*Քայլում է առասպելյալ մեր գայլը...*
*Հենց առաջին օրից բզկտված են նրա*
*Նիհար կողերը - բյուր գազանների*
*կողմից,-*
*Եվ կողերով կարմիր ահա քայլում է նա՝*
*Դեմքը տված գալիք փորձանքների*
*հողմին:*

*«Այս խորշակյալ, անդուռ Արարատյան դաշտում»* այդ հալածական գայլը *«Ոռնացել է իր վիշտը անկշտում... Եվ ոռնոցը նրա // Դարձել է հիմնը մեր անարծագանք - // Ու դարերով հնչել մեր պատմության վրա»*:

Ահավոր է այս ամենի գիտակցումը, բայց եւ՝ սթափեցնող, որովհետեւ հեղափոխությունը հայ ժողովրդին «բերեց» տարածքային վիթխարի կորուստներ, իսկ Անդրկովկասյան դաշնության կազմում (1922-1936 թթ.) հայ ժողովուրդը դարձյալ հալածանքների զոհ էր: Այս ծանր վիճակի զգացողությամբ Չարենցը հնչեցնում է տագնապի կոչնակները եւ ժողովրդին պատվիրում չտրվել անցյալի հիշատակներին, որպեսզի չկորչի ներկան.

*Այսպես անցել ենք մենք անխոհ ու*
*անգաղափար*
*Պատմության քառուղիներով, որպես*
*միրաժ,-*
*Կտրել ենք երկար մի ճանապարհ,*
*Եվ ճանապարհը մեր այս*
*Ե՞րբ է արդյոք, ե՞րբ է փայլատակել,*
*օ, ե՞րբ,*
*Ե՞րբ է վառվել լույսով գալիքնափայլ,-*
*Եվ ո՞վ, եւ ո՞վ է մեր ապագային տվել*
*Անխզելի ընթացք ու գաղափար...*

Այն օրերին, երբ հեղափոխական ծնծղաներով փառաբանվում էր Հայաստանի փրկությունը, եւ խլացվում ժողովրդի հիշողությունը, Չարենցը խոսում է նրա պարտությունների ու դատապարտվածության մասին, որովհետեւ տեսնում էր իշխողների կործանարար ազգադավ քաղաքականությունը: Իսկ ժողովուրդը, ըստ Չարենցի, *«եղել է հանճարեղ, եղել է կառուցող»*: Այսինքն՝ մեղքը ժողովրդինը չէ, այլ՝ նրա կարճատես առաջնորդներինը, որ նրան միշտ գերության են մատնել.

*Ջլատվել է այսպես ժողովրդի անեզր*
*Հավաքական հանճարը զավթիչների*
*հանդեպ,-*
*Եվ դարձել է ահա ժողովուրդը ե՛ւս,*
*Իր տերերի նման, անուղի ու անդեմ...*

Այսպես Չարենցը դառը զայրույթի խոսքեր է ասում մեր *«անքանքար»* պատմությունը կերտողներին, ովքեր ժառանգաբար հետնորդ սերունդներին են փոխանցել *«մեր դարերի կորուստը»* եւ կործանել մեր ազգային փառքը: Այս դառը մտորումներով էլ նա ավարտում է պոեմը. *«Ու կանգնած ենք ահա ապագայի հանդեպ // Չարմանալի՛ թեթեւ, զարմանալի՛ անդեմ՝ // Մերկության պես տկլոր ու անանցյալ...»*: Չարենցն այս տագնապների մեջ էր, որովհետեւ հերոսական սխրանքի պատրաստ ժողովուրդն ստրկացվել էր, կեղեքվել ֆիզիկապես ու բարոյապես, զինաթափվել գաղափարապես, քայքայվել հոգեպես, սնանկացել տնտեսապես. Նրան չէին թողել՝

*Ո՛չ մի կտոր երկաթ, կամ անագե*
*շաղախ,*
*Կամ մարմարե մի սյուն, կամ*
*թեկուզ կիր,*
*Որ փորձության պահին անձրեւներից*
*մխար*
*Եվ իր ծուխը խառներ ըմբոստության*
*երգին...*

Շարունակելի

**Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
**Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր**

## ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

# ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

*Ձեր հարցերին պատասխանում է Տաթեւի վանքի վանահայր Միքայել աբեղա ԳԵՎՈՐԳՅԱՆԸ: Ձեր անունից հարցերն ուղղում է մեր թերթի արտահաստիքային թղթակից Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ:*



**- Հա՛յր սուրբ, գիտենք, որ մինչ Քրիստոսը խաչն անարգանքի ու նախատինքի նշանն էր, սակայն Քրիստոսի հարությամբ խաչը դադարեց մահվան խորհրդանիշ լինելուց՝ դառնալով կյանքի, հարության ու հաղթանակի խորհրդանիշ: Ինչպե՞ս:**

- Հռոմեական կայսրության մեջ ապստամբ ծառաներին դատապարտում էին խաչի անարգ մահվան՝ իբրեւ մեծագույն պատժի: խաչելությունը մահվան ամենաստորացուցիչ ձեւն էր, անարգանքի միջոց, որով ստրուկներին էին խաչում: Մեր Տերն էլ, ծառայի կերպարանք հագած, հանձն առավ խաչը, վերցրեց մարդկության վրա ծանրացած այդ անարգանքը: Սակայն խաչը Քրիստոսի զոհագործությամբ անարգանքի գործիքից վերածվեց զորության նշանի, որովհետեւ խաչը մի զոհասեղան էր, որի վրա պատարագվեց Աստծո Գառը: Մեր Տերն Իր խաչելությունից առաջ հաստատեց սուրբ Հաղորդության խորհուրդը՝ ասելով. «Այս արեք իմ հիշատակի համար»: Եվ Քրիստոսի հիշատակը հենց խաչելությունն է, որը մենք պատարագով ենք կատարում, իսկ պատարագ թարգմանաբար նշանակում է զոհաբերություն կամ խաչելություն: Եվ իրապես, խաչը երկնային սեղանն է, որի վրա Կենաց Հացն է մատռվակվում, տրվում մարդկանց: Երկրի վրա չկա ավելի հրաշալի, սքանչելի կերակուր եւ ավելի գեղեցիկ ու չտեսնված սեղան, քան խաչի սեղանը, որի վրա պատարագվում է Աստծո Որդին, իսկ ամենահամեղ կերակուրը սուրբ Հաղորդությունն է՝ Հիսուս Քրիստոսի մարմինն ու արյունը: Եվ Քրիստոսի պատգամի համաձայն՝ մենք՝ ողջերս, միշտ կատարում ենք Քրիստոսի զոհաբերության հիշատակը. այսօր մենք խաչի խորհրդով սուրբ Սեղանն ենք հաստատել եկեղեցու մեջ, որը քառանկյուն է, ինչպես սուրբ խաչն է քառանկյուն: Եթե այն ժամանակ Քրիստոսի մարմինն ու արյունն էր զոհաբերվում խաչի վրա, այսօր Քրիստոսի մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու գինին են պատարագվում քառաթեւ սուրբ Սեղանի վրա, որը դարձյալ խաչի խորհուրդն ունի: Ուստի այս զոհաբերությամբ խաչելության հիշատակը մնաց եկեղեցում: Սուրբ Պատարագի միջոցով մենք Քրիստոսի մարմինն ու արյունն ենք բաշխում՝ անմահության Կերակուրը, կենդանի Հացը, եւ ով հավատքով մոտենում է այս զոհասեղանին, այս խաչի խորհրդին, ճաշակում է անմահության Կերակուրը, եւ ինչպես Քրիստոսն է ասում, «...թե մեկն այս հացից ուտի, հավիտենապես կապրի»:

**- Հա՛յր սուրբ, մենք՝ քրիստոնյաներս, ապավինում ենք խաչի զորությանը, ինչպե՞ս է խաչը մեզ պահում-պահպանում, ո՞րն է առհասարակ խաչի խորհուրդը:**

- Սուրբ Պողոս առաքյալն ասում է, որ «Խաչի քարոզչությունը հրեաների համար գայթակղություն է, հեթանոսների համար՝ հիմարություն, իսկ մեզ համար՝ Աստծու զորությունը» (Ա Կորնթ. Ա 23, 24), նաեւ՝ «Կորստյան մատնվածների համար խաչի քարոզչությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու զորություն» (Ա Կորնթ. Ա 18): Նախ պետք է իմանալ, որ յուրաքանչյուր մարդ պետք է իր վրա կրի այն երկրի, պետության նշանը, որում ապրում է: Մեր երկրի նշաններն են՝ գերբը, դրոշը, հիմնը, որոնք մեր ինքնության եւ հայ լինելու խորհրդանշաններն են: Այդպես էլ մենք, լինելով Քրիստոսի ծառաները, երկնքի արքայության ժառանգորդները, պետք է ունենանք մեր նշանը, որով կտարբերվենք նրանցից, ովքեր չեն կրում խաչի նշանը: Սուրբ Մկրտության ժամանակ մյուռոնի խաչաձեւ դրոշմումով՝ մենք դառնում ենք քրիստոնյա, Աստծո զավակ՝ տարբերվելով ոչ քրիստոնյաներից: Այսինքն՝ սուրբ խաչի նշանը զորության ու տարբերակման նշանն է, որով մենք դառնում ենք երկնքի արքայության ժառանգորդ: Ուրեմն խաչը մեզ համար զորության, հաղթության, երկնքի արքայության նշանն է: Եվ գիտենք, որ խաչի նյութը փայտն է, որն այրվում է կրակից, իսկ Աստված կրակ, հուր է, որովհետեւ Քրիստոսն ասում է. «Ես եմ աշխարհի լույսը» (Հովh. Ը 12): Աստված իջավ փայտից խաչի նշանի վրա, սակայն խաչի նշանը ոչ միայն չայրվեց, այլեւ թրծվեց, բովվեց եւ դարձավ անպարտելի զենք, երկսայրի սուր, որով մենք հաղթում ենք մեղքին, չարին, սատանային: Սբ Գրիգոր Տաթեւացին ասում է, որ երբ մենք հավատքով խաչակնքվում ենք, մեզ վրա իջնում է Սուրբ Հոգին: Դարձյալ՝ երբ հավատքով, սիրով, եւ Տիրոջն ապավինելով, սրտի հառաչանքով, զղջումով, մեղքի գիտակցությամբ խաչակնքվում ենք՝ Տիրոջ ողորմությունն ու շնորհը խնդրելով, մեզ վրա իջնում է Սուրբ Հոգին, քանի որ խաչելությամբ է, որ Սուրբ Հոգին տրվեց մարդկությանը: Սուրբ Հովհաննու Ավետարանում ասվում է, որ քանի դեռ Որդին չէր փառավորվել, Սուրբ Հոգին չկար: Մարդու Որդու փառքը խաչելությունն էր, խաչն է: Ուրեմն խաչի միջոցով Սուրբ Հոգին իջավ մեզ վրա, եւ այսօր էլ, երբ խաչակնքվում ենք, Սուրբ Հոգին իջնում է մեզ վրա:

**- Եկեղեցու սուրբ հայրերն ասում են, որ խաչի եւ խաչելության խորհուրդն այնքան մեծ էր, որ նույնիսկ անբան բնությունը չկարողացավ տանել իր Արարչի խաչելությունը: Եվ ինչպես Սուրբ Գիրքն է վկայում, Քրիստոսի խաչելության ժամանակ արեգակը խավարեց..., տաճարի վարագույրը վերից վար պատռվեց, երկիրը շարժվեց, ժայռերը ճեղքվեցին, գերեզմանները բացվեցին, մեռելներից շատերը հարություն առան... (տե՛ս Մատթ. ԻԷ 51-53)...**

- Քրիստոսի խաչելությունն աստվածային մեծ զորություն է: Ինչպես Եկեղեցու սբ հայրերն են ասում, արեգակը՝ Աստծու արարածներից մեկը, խավարեց, իր աչքերը փակեց, որպեսզի իր Արարչին խաչի վրա չտեսնի, լուսինը արյան գույնով ներկվեց, արյուն-արտասուք թափեց՝ ողբ ու կոծ անելով: Երկրաշարժեր եղան, քանզի երկիրն ընդվզում էր իր Արարչի խաչելության դեմ: Ննջեցյալները հարություն առան, տաճարի վարագույրը պատռվեց՝ խորհրդանշելով հին օրենքի ավարտն ու նորի սկիզբը: Այս բոլոր հրաշքները ցույց են տալիս, որ սբ խաչն աստվածային մեծ զորություն ունի: Եվ ինչպես Եկեղեցու հայրերն են ասում, խաչը մի սանդուղք է, որի հիմքը դրվեց երկրի վրա, իսկ վերին մասը հաստատվեց երկնքում: Հիշենք, թե ինչպես Քրիստոսի մկրտության ժամանակ երկինքը պատռվեց, ու Սուրբ Հոգին աղավնակերպ իջավ Նրա վրա: Մինչ այդ որեւէ տեղ Հին Ուխտում չկա երկինքը բացված լինելու մասին վկայություն: Իսկ այսօր նախ՝ Քրիստոսի մկրտությամբ, հետո՝ խաչելությամբ, երկինքը բացվեց, հրեշտակները խաչի սանդուղքով իջան երկիր, եւ մարդիկ էլ խաչի սանդուղքով բարձրացան երկինք: Այսպիսով՝ խաչը հաստատվել է իբրեւ աստվածային շնորհ, մի վերելակ, որով մենք թեւավորված թռչում եւ հասնում ենք երկնքի արքայություն: Սա է խաչի զորությունն ու խորհուրդը:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է

## *Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.)*

## ՀԱՄԱՌՕՏ ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

*Սկիզբը՝ էջ 5*

Եւ բռնադատեաց եւ նեղեաց յոյժ զերանելին Կոյինդոս ուրանալ զՔրիստոս եւ զոհել կռոցն: Եւ նոյնժամայն այսահարեցաւ Ռուփինոս եւ չարաչար տանջէր զանձն: Եւ սուրբ վկայն Քրիստոսի գթացաւ ի նա եւ բժշկեաց անուամբն եւ խաչիւն Քրիստոսի: Եւ նա պարգեւաւք եւ մեծա-րանաւք արձակեաց զսուրբն, եւ ինքն գնաց ի Պերգամոն:

Իսկ կռապաշտքն բնակիչք Կիմէոս քաղաքին տարան զՔրիստոսի վկայն ի տաճար կռոցն եւ յոյժ տանջանաւք չարչարեցին զնա: Եւ յանկարծակի եղեւ շարժ, եւ կործանեցաւ տաճարն ի հիմանց եւ բագինքն, որ ի նմա էին, խորտակեցան, եւ անաստուածքն փախեան: Եւ սուրբն փրկեցաւ եւ գնաց ի յարկս իւր:

Եւ զկնի քառասուն աւուր գնաց ի քաղաքն, եւ կալաւ զնա Կլէարքոս իշխանն եւ կացոյց յատենի եւ դատապարտեաց զնա, զի ոչ զոհեաց կռոցն: Խորտակեցին զսուրսն, եւ հրեշտակ Տեառն ողջացոյց զնա: Եւ երթեալ ի տուն իւր եկաց զԺ. (10) ամ աստուածահաճոյ վարուք, զհիւանդս եւ զախտաժէտս բժշկէր եւ աղքատաց ողորմէր եւ խաղաղական մահուամբ հանգեաւ ի Քրիստոս ի Մարգաց ԻԷ եւ Յուլիս Գ: Եւ է մեզ աւգնական եւ բաւէխաւս առ Քրիստոս այժմ եւ յաւիտեանս:

Վենետիկ 710, 542բ-543ա
Վենետիկ 402, 445բ
ՄՄ 7361, 139ա-բ
Մորգան 622, 353ա-բ

**C - Ի սմին աւուր վկաութիւն սրբոյն Խուրովու նոր վկայի, որ կատարեցաւ ի Գանձակ ի քաղաքին Աղուանից**

Հաղթող նահատակն Քրիստոսի Խուրով էր յաշխարհէն Աղուանից, ի մայրաքաղաքէն Գանձակայ քրիստոնեայ եւ զաւակ քրիստոնէից, պատանի գեղեցիկ եւ ողջախոհ եւ պարկեշտ ունէին: Ունէին եւ դրացի պարսիկ, որ ունէր որդի եւ դուստր, եւ աղջիկն ցանկացաւ Խուրովու եւ կամէր անկանել ընդ նմա, եւ պատանին ոչ առ յանձն պղծութիւն համարելով զիրսնս: Եւ աղջիկն շնացաւ ընդ եղբայր իւրում եւ յղացաւ: Եւ հայր նորա կշտամբէր զնա, թէ՝ ո՞վ անգաւ ընդ քեզ: Եւ դուստրն սատանաի զրպար//տեաց զսուրբ պատանին Խուրով, զի կամէր այնպէս հասանել ցանկութեանն: Եւ հայր աղջկանն ամբաստան եղեւ առաջի ամիրայի քաղաքին եւ պարսից հրապարակին: Եւ կոչեցեալ զնայ հարցանէին, եւ նա ասաց. «Քրիստո-նէից ոչ է այդ աւրէնք, այլ պարսից»: Եւ բարկացեալ ի վերայ նորա տանջեալ եդին ի բանդի եւ ասէին զնա. «Կամ ա՛ռ զաղջիկն կին եւ լե՛ր



տաճիկ, եւ կամ մեռանիս քարկոծանաւք եւ հրով»:

Իսկ նա հաստատուն կացեալ ի հաւատսն ոչ ումեք անսայր. ո՛չ պար-սիցն, որ խոստանային նմա պարգեւս եւ պատիւս, եթէ լսէ, եւ դարձեալ սպառ-նալիս եւ տանջանս, եթէ ոչ լսէ: Եւ ոչ ծնաւղացն որ արտասուօք աղաչէին զնա. «Յա՛նձն առ վայր մի, եւ ապա տարցուք զքեզ յերկիրն Վրաց եւ անդ համարձակութեամբ պաշտեա՛ զՔրիստոս»: Եւ նա ասաց. «Լաւ լիցի մեռանել ինձ բարի անուամբ, քան կեղտ անուն թողուլ յաշխարհի»:

Եւ իբրեւ ոչ լուաւ նոցա, հանեալ արտաքոյ քաղաքին եւ կապեցին զթթե-նի ծառոյ միոյ եւ քարկոծեցին զնա բազմութիւնք ռամկին: Եւ այնպէս աւանդեաց զհոգին իւր առ Աստուած նահատակն Խուրով Մարգաց ԻԷ եւ Յուլիս Գ: Եւ ծնաւղք նորա թաղեցին զնա:

Եւ լոյս մեծ ծագեաց ի վերայ գերեզմանին: Եւ կինն, որ զրպարտեաց զնա, այսահարեցաւ: Ծնաւ ծնունդ այլանդակ՝ խառն ի մարդոյ եւ անասնոյ: Եւ յամօթ լեալ սպանողքն, եւ արդար երեւեալ վկայն Քրիստոսի: Եւ տեսողքն փառաւորէին զԱստուած յաւիտեանս. ամէն:

Վենետիկ 710, 543ա-բ
Վենետիկ 402, 445բ-446ա
ՄՄ 7361, 139բ-140ա
Մորգան 622, 353բ-354

**A - Տաւն է սուրբ եւ փառաւորեալ առաքելոյն Թովմայի յերկոտասանիցն:**

**Եւ փառաւոր յիշատակ ըստ Լադինացոցն:**

Առաքեալն Քրիստոսի սուրբն Թովմաս՝ անուանեալն երկուորեակ, էր մի յերկոտասան առաքելոցն: Եւ քարոզեաց ի հնդիկս եւ զբազումս լուսաւորեալ դարձոյց ի Քրիստոս: Եւ չարչարեալ սպանաւ գեղարդեամբ յետ մեծամեծ նշանաց եւ սքանչելագործութեանց: Սա է, որ շաւշափեաց զխոցուած տիգին եւ զբեւեռացն, որ ի կողսն եւ ի ձեռսն Տեառն, յորժամ յութերորդ աւուրն յետ յարութեանն երեւեցաւ դարձեալ Տէրն դրաւքն փակելովք առաքելոցն, մինչ ընդ նոսա էր Թումաս, որ նախ յառաջնում աւուրն ոչ պատահեաց:

Վենետիկ 710, 542բ
Վենետիկ 402, 445ա-բ
ՄՄ 7361, 139ա
Մորգան 622, 353ա

# XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 6*

Աշխարհի տարբեր ծայրերից 300-ից ավելի հղած հեռագրերը սովորական հեռագրեր չեն, այլ յուրատեսակ գիտական զեկուցումներ, ընդարձակ նամակներ: Արեւմտյան եւ Արեւելյան Հայաստանի տարբեր մշակութային կենտրոններ, հայկական գաղթօջախներ, հայ մամուլի տարբեր եւ բազմաթիվ օրգանների խմբագիրներ եւ աշխատակիցներ իրենց ջերմ վերաբերմունքն են արտահայտում միաբանության անդամներին: Այդ 300-ից ավելի հեռագրերից ամեն մեկն իր մեջ ամփոփում է 50-ից ավելի ստորագրություն: Հեռագրերի ջերմությունը չի եզրափակվում միայն բառերով. դրանք արտահայտվում են նաեւ նվիրատվություններով, որոնց մասնակիցները ոչ միայն մեծահարուստներ էին, այլեւ մշակութային օջախներ՝ Լազարյան ճեմարանի դասախոսական եւ ուսանողական կազմը, Ռիգայի հայ ուսանողությունը, հայկական բազմաթիվ վարժարանների ուսանողներ: Գորգեր, հարուստ գրականության հազվադեպ նմուշներով լի գրադարաններ, գեղարվեստական բացառիկ արժեք ներկայացնող կտավներ, որոնց մեջ առանձնացվում է Գ. Բաշինջաղյանի Սեւանա լճի տեսարանը ներկայացնող կտավը: Առանձնապես շեշտվում է Գր. Գափամաճյանի նվերը, որը բնորոշվում է որպես «ճարտարության եւ գյուտի զարմանալի միաբանութիւն»: Կտավը պատկերում է Մասիսի ամենաբարձր գագաթը, նրա ստորոտին՝ Արարատյան բնաշխարհը, որի վրա իշխում է տխրության ոգին. տգիտությունն ու բռնությունը թեւեր առած թռչում են՝ իրենց ետեւից գերանդիով մահ սփռելով եւ աշխարհն ավերակ դարձնելով: Այդ խորապատկերի վրա «Ալիշան, Դուրեան, Գամառ-Քաթիպա, Սրուանձտեանց, Ալ. Ծատուրեան կը կոչկոչին ու կը զայրանան»: Նկարի խորքում պատկերված է Մխիթար աբբահայրը:



Նվիրատվություններ եղան նաեւ գումարներով: «Յիշատակարանը» (էջ 197-198) հրապարակում է նվիրատուների ցանկը եւ նվիրատվության չափը, իսկ ընդհանուր գումարը հասնում է 10728,35 իտալական դրամի միավորի:

Բոլոր զեկուցումների եւ ելույթների մեջ «Յիշատակարանը» առանձնապես ընդգծում է հայոց նահապետի՝ Ղեւոնդ Ալիշանի պատասխան հուզիչ ելույթը, ում կյանքի 70 տարիները միահյուսված էին այդ միաբանության գործունեությանը, եւ ով, ցավոք, իր մահկանացուն կնքեց տոնակատարությունից 2 ամիս անց՝ նոյեմբերի 9-22-ին: Արտակարգ հուզիչ է այն փաստը, որ այդ հոբելյանի տոնակատարությունը նշվեց ոչ միայն Վենետիկում, այլեւ Կոստանդնուպոլսում, Պարտիզակում, Դիարբեքիրում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Կիպրոսի Ս. Մակարի վանքում, Ախալցխայում, Աբասթումանում եւ բազմաթիվ այլ հայաբնակ վայրերում: «Յիշատակարանում» ոչ միայն թվարկվում են այդ վայրերի անունները, այլեւ տեղի թղթակիցները մանրամասն հաշվետվություն են ներկայացնում այդ տոնակատարությունների մասին:

Միաբանության հոբելյանին անդրադարձան ոչ միայն հայկական թերթերը եւ մամուլի այլ օրգաններ, այլեւ օտարերկրյա մամուլը: «Յիշատակարանը» մանրամասն տեղեկություններ է հաղորդում, թե իտալական, ֆրանսիական (գաղղիական), ռուսական, հունգարական, գերմանական, անգլիական մամուլի որ օրգանն ինչ հոդվածով է լուսաբանել այդ տոնակատարությունը: Փաստորեն, 110 տարի առաջ հրատարակված այդ «Յիշատակարանը» յուրահատուկ հաղորդակցության՝ կապի միջոց է դարձել պատմության քառուղիներում, եւ այսօրվա ընթերցողը դրա միջոցով ամբողջական պատկերացում է կազմում այդ իրադարձությունների մասին:

*Շարունակելի*

***Էմմա ԿՈՍՏԱՆԴՅԱՆ***
***Պատմական գիտ. դոկտոր***

## ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԸ

# ԽԱՉԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

*Սկիզբը՝ էջ 7*



**- Հա՛յր սուրբ, Քրիստոս Ավետարանում պատգամում է Իր հետեւորդներին վերցնել խաչը եւ գնալ Իր ետեւից (տե՛ս Մատթ. ԺԶ 24, 25): Ինչպե՞ս հասկանալ Տիրոջ խոսքերը:**

- Տերն Ավետարանում ասում է, որ «Անձուկ է դուռը, եւ նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, եւ սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ. Է 14): Ինչպես Քրիստոսն անցավ խաչի չարչարանքների ճանապարհով, այնպես էլ մեզ զգուշացրեց, որ նեղ է ճանապարհը եւ փշոտ, եւ որ մենք էլ նեղությունների միջով պիտի ընթանանք: Փրկության այլ ճանապարհ չկա: Մենք ինքներս մեզ համար դժվարություններ չենք հորինում, բայց երբ հետ ենք կանգնում մեղքի ճանապարհից, պետք է նեղություն կրենք ու չարչարվենք այդ արդար ընթացքի համար: Քրիստոնյաները հաճախ են ասում, թե որքան դժվար է պատվիրանները պահել, արդար ու առաքինի ճանապարհով ընթանալ, այո՛, դժվար է, մենք մեծ նեղություններ ենք կրում, բայց երբ այս ճանապարհին հուսահատվում ենք ու հրաժարվում այլեւս պայքարելուց, նեղություններ կրելուց՝ հանուն արդարության, ձեռքներս ծալում-նստում ենք, հայտնվում ենք ավելի վատ վիճակում, որովհետեւ թեպետ եւ մեղքի դեմ պայքարում նեղություններ էինք կրում, բայց հոգեւոր խաղաղություն էինք ապրում: Ուստի երբ դադարեցնում ենք այս պայքարը, թեպետ ունենում ենք թվացյալ հանգստություն, բայց կորցնում ենք մեր հոգու հանգստությունը, խղճի խայթ ենք զգում, որն ավելի դժվար ու ծանր է, քան արդարության համար հալածվելը: Ուրեմն պատվիրանները պահելը դժվար է, բայց չպահելն ավելի դժվար է:

**- Քրիստոսն Ավետարանում Իր հետեւորդներին կոչում է խաչակից ու չարչարակից լինել Իրեն: Մերօրյա քրիստոնյան ինչպե՞ս կարող է խաչակից լինել Քրիստոսին:**

- Գր. Տաթեւացին, մեջբերելով սրբերի նահատակությունը, ասում է, որ այն ժամանակ սրբերը հալածանքներ ու նեղություններ էին կրում բռնավոր թագավորներից, որոնք հալածում էին քրիստոնեությունը: Այսօր մեր դեմ բռնավոր թագավոր է սատանան: Այսօր մեր չար կամքն է դառնում բռնավոր թագավոր՝ ստիպելով մեզ չարը գործել: Ուստի մենք պետք է պայքարենք սատանայի եւ մեր կամքի դեմ, որպեսզի չարը չկամենա: Սրբերը նեղություններ ու չարչարանքներ էին կրում՝ այրվելով կրակների մեջ: Այրող կրակն այսօր բարկությունն է, որից շատ հաճախ քրիստոնյաները պարտվում են: Ուրեմն այսօր մենք պետք է պայքարենք բարկության կրակի դեմ: Մեծ նեղություններ կրելով՝ երբեք չբարկանանք որեւէ մեկի դեմ, որպեսզի Աստծո ծառաները լինենք: Սրբերը խեղդվում էին ջրի մեջ, իսկ մեզ այսօր խեղդում է ցանկության մեղքը, որը Եկեղեցու հայրերը գեջ, այսինքն՝ խոնավ ցանկություն են անվանում, որի դեմ պայքարելով՝ նահատակության գործ կատարած կլինենք, որովհետեւ հաղթահարելով ցանկասիրության (բղջախոհության) մեղքը՝ կհավասարվենք նահատակներին: Սրբերը սրերով էին գլխատվում ու նահատակվում, այդպես էլ այսօր տարբեր նեղություններն ու փորձությունները, որոնք «տարօրինակ» է կոչում Պետրոս առաքյալը (տե՛ս Ա Պետր. Դ 12), մեզ վրա գալիս են սրերի հարվածների նման, որոնց դիմանալով՝ մենք կնմանվենք սբ նահատակներին: Ուրեմն մեր առօրյա կյանքում «մեղքի դեմ պայքարենք արյուն թափելու աստիճան», որպեսզի այդ կերպ Քրիստոսին խաչակից ու չարչարակից լինենք: Չարչարանքների ճանապարհն ընտրենք ու չհրաժարվենք մեր փրկությունից, քանզի ով հրաժարվում է չարչարանքներ կրելուց, հրաժարվում է իր փրկությունից:

## Հայաստանյան «Կլոր սեղան» հիմնադրամի տարեկան ժողովը



Հոկտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ եկեղեցիների համաշխարհային խորհրդի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից հիմնադրված Հայաստանյան «Կլոր սեղան» բարեգործական միջեկեղեցական հիմնադրամի՝ 2010-2011 թթ. տարեկան ամփոփող ժողովը:

Ժողովն սկսվեց «Կլոր սեղանի» հոգաբարձուների խորհրդի նախագահ, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս Հովհաննիսյանի աղոթքով եւ բացման խոսքով: Սրբազան հայրը, ողջունելով ժողովին ներկա գործընկերներին եւ աշխատակիցներին, հաջողություն ու բարի ընթացք մաղթեց ժողովի աշխատանքներին: Ներկաներին ողջունեց նաեւ ՀԿՍ-ի գործադիր տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը՝ ուրախությամբ նշելով, որ հիմնադրամի երկարատեւ աշխատանքի արդյունքները նկատելի են, ընդլայնվել է գործընկերների ցանցը, ներկայացրեց նաեւ միջեկեղեցական կազմակերպության օպերատիվ եւ արագ արձագանքը Տավուշի մարզում տեղի ունեցած սողանքի հետեւանքների հաղթահարման գործում:

Ժողովին մասնակցում էր նաեւ Հայաստանի Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը, ով իր ելույթում ներկայացրեց Հանրային խորհրդի գործառույթները, ստեղծման նպատակը եւ կատարվող աշխատանքները:

Այնուհետեւ ՀԿՍ-ի գործադիր տնօրենը եւ ծրագրերի պատասխանատուները ներկայացրեցին հիմնադրամի 2010-2011 թթ. գործունեության հաշվետվությունը, ապա տեղի ունեցան քննարկումներ, որոնց ընթացքում նախանշվեցին հիմնադրամի հետագա գործունեության առաջնահերթ ոլորտները:

*Լրատվական նյութերը*
***ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**

**web կայք՝**
**kh-tert.livejournal.com**

Ստոր. տպագր.
31.10.2011 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**